№ 72 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 10

1909

ՆՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 10 № 72

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ!

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ չա-
որպէսզի սպառեն իրանց աւելի վատ ապ-
րանքների միատեսակ ներկն ու մարկան,

րունակում են կեղծել մեր պակէտները,
բանքը, գործածելով արկղիկներ և կա-
փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
№ 8 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ, մեր պ. պ. գնորդներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

Ն. Ի. ԲՕՋԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

(Ն. Կ.) 243. 10—5

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդական ներկայացումների կազմակերպ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Շաբաթ, ապրիլի 11-ին
կը ներկայացվի
ԽԱԹԱԲԱԼԱ
Կոմ. 4 գործ., հեղ. Գ. Սունդուկեանի
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին
Տեղերի գները 5 կոպէկից մինչև 50 կ.
Տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում:
(ու. 2.) (տո.) 295. 2—1

Կ. ՀԱՅ ՈՒՍ. ԵՒ ՎԱՐԺ. ՄԻՈՒԹԵԱՆ
Նախաձեռնութեամբ
կիրակի, ապրիլի 12-ին
ԿՈՎ. ՀԱՅ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Արտա-արադեան հրապ. սեփ. տուն)
կայանալու է
ՄԱՆԿԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ
I բաժին
Երաժշտական գրական՝ մասնակցութեամբ ՊԱՑԵՎ եղբայրների
II բաժին
«Матрена Спиридонова»
Կատակերգ. Գլազունովի 1 գործողութեամբ.
III բաժին
Պարեր
Սկիզբն է ցերեկվայ ժամը 12-ին
Մուտքը 35 կոպ.
(ու. կ.) (տո.) 299. 2—1

Թիֆլիսի Ժողովարան
Շաբաթ, ապրիլի 11-ին
Ընտանեկան երեկոյթ
Գ. պ. անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացվի
1
«Новые цыганскiе романсы въ лицахъ»
Օպերետկա 2 գործ., հեղ. Սէվերսկու
Մասնակցում են՝ Ն. Ա. Պրէսինսկայա, Ն. Պ. Գլէբով, Պ. Ն. Մորոզով և ուրիշն.:
Երաժշտախումբը Ա. Ֆիդելմանի ղեկավար.:
II
Ռուս-մալօռոսսիական օպերետային խումբը տիկ. Մ. Ֆ. Դիդէնկօյի մասնակցութեամբ
կը ներկայացնէ
«ЯМЩИКИ»
Օպերետտա 1 գործ., հեղ. Պետրօվի
Ռեժիսոր՝ Դ. Դ. ԶԱՐՕՎ.
Ներկայացումից յետոյ՝
Պարեր
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին
Հիւրերը թոյլատրվում են համաձայն ընդհանուր հիմունքների՝ 1 ր. վճարով:
(ու. 2.) (տո.) 298. 2—1

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Մեր ժամանակի համար բնորոշ է, որ նա չէ կարողանում ազատվել քաղաքական ծանր բարդութիւններից և միշտ կանգնած է սուր արտայայտութիւնների սպառնալիքի առաջ:

Ամբողջ ամիսներ Եւրոպան կանգնած էր աւստրօ-սերբիական պայքարի և ճգնաժամի հանդէպ և երկիւղ էր կրում, թէ մի գուցէ խաղաղութիւնը խախտվի և տեղի տայ զէնքի շառաչիւնին:

Հազիւ վերջացաւ այդ պայքարը, հազիւ լուծվեց անուելի ճգնաժամը հաշտութեան կոչով, և ահա քաղաքական աշխարհի առաջ բուսան Թիւրքիայի ներքին խռովութիւնները, որոնք, եթէ չը լուծվեն բաւարար կերպով, կարող են ներքին խնդիրների շրջանակից անցնել արտաքինի և նորից հրդեհելով Արևելքը՝ եւրոպական միջամտութեան խնդիրներ առաջացնել:

Միևնոյն ժամանակ ճգնաժամային վիճակի մէջ է Պարսկաստանի դրութիւնը, որը մօտենում է իր լուծման: Ազգաբնակութիւնը այլևս անկարող է դիմանալ այն անկարգ ու խառնակ վարչական կեանքին, որի մէջ գցել են նրան այդ երկրի խռովութիւնները: Եւ եթէ երկրի իշխանութիւնը և ժողովրդական ույժերը իրանց հեղինակութեամբ անկարող հանդիսացան վերականգնելու կարգը, այդ կանեն օտար ույժերը՝ Ռուսաստանի և Անգլիայի զօրքերը և պատերազմական նաւերը:

Հաւանական է կարծել, որ թէ թիւրքական և թէ պարսկական խռովութիւնները կարող էին բաւարար լուծում ստանալ, եթէ կանոնաւոր սահմանադրական կարգը վերահաստատվէր երկու երկրների մէջ: Երիտասարդ-թիւրքերի նորից երկրի իշխանութեան հրաւիրվելը, պարլամենտական ընտրութիւնների վերսկսելը Պարսկաստանում խաղաղութեան գրաւականներ կը լինէին:

Սակայն մի խնդիր մնում է հրապարակի վրա անորոշ և չը լուծված: Դա եւրոպական բոլոր պետութիւնների վերաբերմունքն է դէպի ընդհանուր խաղաղութեան հարցը: Արդեօք նրանք բոլորն էլ հետամուտ են խաղաղութեան ապահովութեան և արդեօք պատրաստ են ամեն միջոց գործ դնելու պատերազմական գործողութիւնների բռնկման դէմ:

Իբրև համոզմունք կարելի է ընդունել, որ եթէ միացեալ Եւրոպան չը ցանկանայ պատերազմ, տեղի չի ունենայ այդ դժբաղդութիւնը: Եւ այժմ էլ եթէ ոչ ոք առանձին միտումներ և հաշիւներ չունի, որոնց չը ցանկանար առաջ տանել թիւրքական և պարսկական խռովութիւնների առիթով, անշուշտ առաջ չեն գայ քաղաքական բարդութիւններ: Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան ամենակտրական կերպով յայտնել են, որ նրանք խուսափում են պատերազմից, մանաւանդ Ռուսաստանը, որ հեռաւոր Արևելքի խոշոր պատերազմից յետոյ զբաղված է իր վերակազմութեան գործերով: Բայց եթէ միւս պետութիւնների մէջ կան այնպիսիները, որոնք ցանկանում են օգտվել իրերի վիճակից իրանց բացառիկ շահերը առաջ քշելու, դա դժբաղդութիւն է. այն ժամանակ եւրոպական խաղաղութիւնը ապահովված չի լինի:

Եւ անտարակոյս, անհրաժեշտ է, որ Գերմանիան և նրա զինակից պետութիւնները վստահութիւն ներշնչեն, որ նրանք ևս խաղաղութեան ջերմ պաշտպաններն են:

Երբ այդ հաւասարեցումը և վստահութիւնը հեղինակաւոր կերպով արտայայտված լինի՝ ներկայ կնճռոտ խնդիրներն էլ աւելի արագ ընթացք կը ստանան և աւելի ապահով կերպով կը մօտենան իրանց լուծման:

Ա. Քալանթար

ՃԱՐԴԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Բեռլին, 8 ապրիլի

Բէյրութից հաղորդում են, որ Ալէքսանդրէտտի շրջակայքի գիւղերը սոսկալի դրութեան մէջ են: Առայժմ ատրճանակի հարուածով ծանր վիրաւորվել է անգլիական հիւպատոսը: (Հ. Գ.)

Լոնդոն, 8 ապրիլի

Ռէյտերին հեռագրում են Կ. Պոլսից. «Հալէպի վիլայէթում անկարգութիւնները շարունակվում են: Անտիոքում և Բիրջիկում գործը հասել է բռնութիւնների: Անգլիացիները և օտարազգիները թաքնվեցին անգլիական փոխհիւպատոսարանում: Անգլիական յածանաւ «Դիանան» Ալէքսանդրիա ափ իջեցրեց 50 զինուորների»: (Հ. Գ.)

Հռոմ, 8 ապրիլի

Ստեֆանիին հաղորդում են, որ Հալէպում իրարանցում է տիրում: Կոտորածը հարևան գիւղերում շարունակվում է: Լուրեր են պտտում, որ դրութիւնը լուրջ է նաև Դամասկոսում: (Հ. Գ.)

Տեղեկութիւններ են ստացվել, որ, Փոքր-Ասիայում, Մարաշի մէջ ևս հայկական ջարդեր են սկսված: («Б.»)

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

Վաշինգտոն, 8 ապրիլի

Ամերիկական երկու նաւեր դիմեցին Միջերկրական ծովը՝ ամերիկական շահերի պաշտպանութեան համար: (Հ. Գ.)

Պարիզ, 8 ապրիլի

Երէկ ծովային մինիստր Պիկար Պիրէյից հեռագիր ստացաւ, թէ «Միշլէ» յածանաւը հասել է Պիրէյ: «Վիկտոր Հիւգօ» յածանաւը գնացել է ուղղակի Մէրսին: (Հ. Գ.)

Մալտա, 8 ապրիլի

«Նանօպլուս», «Օկեան» գրահանաւերը և «Մինէրվա» յածանաւը հրաման ստացան դուրս գալ Թիւրքաց ջրերը: (Հ. Գ.)

Լոնդոն, 3 ապրիլի

Անգլիական ծովային մինիստրութիւնը հեռագրով յայտարարութիւն է ստացել աւստրիական կառավարութիւնից, որ Աւստրիայի գլխաւորական նաւատորմը ամեն մի րոպէ պատրաստ է միանալու անգլիականին: («Р. С.»)

Սօֆիա, 8 ապրիլի

Բուլղարական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է. «Թիւրք-բուլղարական համաձայնութեան ստորագրութիւնը և Բուլղարիայի անկախութեան յայտարարութիւնը տեղում ընդունվեց գոհունակութեամբ: Ընդհանուրի կարծիքն այն է, որ Թիւրքիայի դրութիւնը պարզվելուց յետոյ երկու հարևան կառավարութիւնները առիթված կը լինեն բարի հարևանութեան հիմունքներով անյապաղ կանոնաւորել բոլոր չը լուծված հարցերը, որոնք խանգարում են անկեղծ փոխադարձ յարաբերութիւններին, որպէսզի այդ կերպ պատրաստեն բարեկամութեան այնպիսի մի հող, որ անհրաժեշտ է երկու երկրների տնտեսական ու վաճառականական շահերի զարգացման համար»: (Հ. Գ.)

Պետերբուրգից հեռագրում են «Баку» լրագրին.

Տեղիս պահպանողական թերթերը գլուխները կորցրել են թիւրքական անցքերի վերջին ընթացքի պատճառով: Ուրախութիւնն ու ցնծութիւնը փոխվել է շփոթութեան:

Բագւում «Цесаревичъ» շոգենաւը կողոպտելու փորձի ժամանակ կալանաւորված քսան և երկու հոգին բերված են այստեղ:

Բեռլին, 3 ապրիլի

Եւրոպայի կաբինէտների միջև մտքերի անընդհատ փոխանակութիւններ են տեղի ունենում համաձայնութիւն կայացնելու լուրջ բարդութիւնների դէպքերի նկատմամբ. («Р. С.»)

Պարիզ, 3 ապրիլի

Յամառ լուրեր են պտտում, որ Էդուարդ թագաւորի Պարիզում լինելը առիթ կը հանդիսանայ քննելու այն հարցը, թէ ինչ դիրք պէտք է բռնեն Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Կ. Պոլսի անցքերի վերաբերմամբ առաջիկայում: Հաւանական է համարվում ծովային հաւաքական ցոյցը Թիւրքիայի ջրերում: («Р. С.»)

Լոնդոն, 3 ապրիլի

Այստեղի քաղաքական շրջաններում Թիւրքիայի ներկայ դրութիւնը վերին աստիճանի վտանգաւոր է համարվում: Գերմանիան և Աւստրիան աջակցում են ռէակցիային: Եթէ ռէակցիան յաղթէ, այն ժամանակ կը սկսվի բալկանեան նոր կրիզիս:

Ամեն ինչ կախված է այժմ Սալոնիկի զօրաբանակից: («Р. С.»)

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Սալոնիկից հաղորդում են, որ արիւնհեղութեան առաջն առնելու համար տեղական կոմիտէտը բանակցութիւններ սկսեց կառավարութեան հետ և իրան ուղղած առաջարկութեանը պատասխանեց հետևեալ պայմանները առաջարկելով.—ապահովել սահմանադրութիւնը, հեռացնել զօրքերը մայրաքաղաքից, իշխանութեան վերականգնել նախկին կաբինէտը, յանձնել վերջին ապստամբութեան ամենագլխաւոր դրդիչներին:

Յոյս կայ, որ Կ. Պոլսում բանակցութիւնները կը վերջանան խաղաղութեամբ:

Հաղորդում են, որ առաջացող զօրքի հետ կայացել է համաձայնութիւն, որ պարունակում է մի քանի կէտեր, որով սուլթանին գահից հրաժարեցնելու հարցը դուրս է հանված: Կ. Պոլսի զօրաբանակի մեծ մասը պէտք է արձակվի և փոխարինվի Սալոնիկի զօրքերով: Կարգուկանոնի պահպանութիւնը մայրաքաղաքում յանձնվելու է մակեդոնական 600 ժանդարմների:

Սալոնիկի զօրքերն առայժմ մայրաքաղաք չեն մտնի: Բոլոր զօրքերն էլ վերստին երդւելու են: Նաւատորմը մայրաքաղաքից կը մեկնէ վարժութիւններ կատարելու պատրւակով: (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Պատգամաւորների պալատ: Ժողովվել են մօտ հարիւր պատգամաւորներ, մնացածները գնացել են Չաթալջա: Ներկայ եղողները Մուստաֆայի նախագահութեամբ դռնփակ քննում են նոյնպէս Չաթալջա մեկնելու հարցը: Կվօրումի բացակայութեան պատճառով պալատը ցրվեց, ոչինչ չորոշելով:

Երէկ գիշեր լուր տարածվեց, թէ Եըլդըզը համաձայնութիւն է կայացրել կոմիտէտի հետ զօրքի առաջխաղացութիւնը դադարեցնելու մասին. սակայն հերքվեց, թէև արտաքին գործերի մինիստրը հաւատացնում էր, որ բանակցութիւնները շարունակվում են և համաձայնութիւնը դեռ հնարաւոր է:

Երէկ երեկոյեան կաբինէտը հրաժարական տուեց, բայց հրաժարականը յետ վերցրեց, երբ խոստում ստանալով Եըլդըզից, որ ոչ մի զինված դիմադրութիւն չի լինի: (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Թիւրքական ահրարական և ռէակցիօն լրագիրները միաբերան գովաբանում են առաջացող զօրքին: Եւրոպական լրագիրները խօսում են սուլթանի առաջիկայ գահընկէցութեան մասին: Թիւրքերը հաւատացնում են, որ Մօնաստիրում սուլթան են հռչակել Ռեշադին:

Կ. Պոլսի վալի Նազիմ-բէյը մայրաքաղաքի և արուարձանների բոլոր քաղաքագլուխների և քաղաքային վարչութիւնների անդամների հետ մեկնեց Չաթալջա և յայտնեց զօրքի հրամանատարին, որ մայրաքաղաքը միացաւ առաջացող զօրքերին: (Հ. Գ.)

Երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը, ինչպէս յայտնի է, պահանջում էր սուլթանի գահընկէցութիւնը: Այժմ նա տրամադիր է հրաժարվելու իր այդ պահանջից:

Լուրեր են պտտում, որ գահաժառանգ Ռէշադը կը միանայ յեղափոխականներին, հէնց որ երիտասարդ-թիւրքերի կողմնակից զօրքերը Պոլիս հասնեն:

Զինուորական մինիստրը շտապով ամրացնում է քաղաքը: Առանձին ուշադրութիւն է դարձված Ստամբուլի շրջակայքի ամրութիւնների վրա:

Սուլթանը հաստատում է, որ ինքը բոլորովին անմեղ է և ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել յեղաշրջման նախապատրաստութիւնների մէջ: Այնուամենայնիւ ոչ ոք նրան չէ հաւատում: («Б.»)

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Կոմիտէտի զօրաբանակը բանակ է դրել Չաթալջայում: Ջոկատները առաջվայ նման Սան-Ստեֆանոյի մօտերն են, թէև լրագիրները հաւատացնում են, որ նրանք մօտեցել են Քեադըթ-խանէին:

Սուլթանի որդի Բուրհան-Էդդինը «Նամակ խմբագրութեան» յօդուածով բողոքում է այն տեղեկութիւնների դէմ, իբր նա ագիտացիա է մղել զօրանոցներում:

Մահմեդական ասսօցիացիայի օրգան «Վաթանը» լոյս չը տեսաւ: Խմբագիրը փախել է:

Ուլեմները մի թռուցիկ հրատարակեցին մահմեդական ասսօցիացիայի դէմ, նախազգուշացնելով որ ազգաբնակութիւնը չէ հաւատում նրա ագիտատորներին: («Հ. Գ.)

Բեռլին, 2 ապրիլի

Զուաւները, որոնք առաջ պահակութիւն էին անում Եըլդըզ-Քեօշկում և հեռացված էին այնտեղից երիտասարդ-թիւրքերի կողմից, սուլթանի հրամանով վերադարձված են իրանց նախկին տեղերը: («Р. Сл.»)

Կ. Պոլիս, 2 ապրիլի

Սուլթանը հրամայեց իրան հաւատարիմ ալբանական զօրքերը կրկին տեղաւորել իրանց հին բնակարաններում, այսինքն Եըլդըզ-Քեօշկի զօրանոցներում: Այնտեղ պէտք է փոխադրվեն նաև այն բատալիօնները, որոնք, երիտասարդ-Թիւրքերի պահանջով, հեռացված էին մայրաքաղաքից:

Պրինց Ազիզը գաղտնի կերպով, «Շուրայի Ումմէթ» լրագրի խմբագրապետի և երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի միւս անդամների հետ միասին, նաւով հեռացել է քաղաքից: («Р. Сп.»)

—

Վարշավայի լրագիրները Պոլսից ստացել են հետեւեալ հեռագիրները. «Երիտասարդ-Թիւրքերի պարագլուխները ապստամբութեան առաջին լուրը ստանալուն պէս շտապեցին պատսպարվել ռուսական դեսպանատան մէջ: Յետոյ նրանք այնտեղից անցան ռուսական շոգենաւը:

Ալբանիայում ապստամբութիւն է ծագել: Ապստամբները արդէն գրաւել են երեք քաղաքներ:

«Ջերնօզօրեան իր զօրքերը ուղարկել է Թիւրքական սահմանագլուխը»: («Р. С.»)

—

Վիեննա, 3 ապրիլի

Այստեղի լրագիրներին հեռագրում են, որ երէկ Պոլսում սուլթանը ընդունել է ուլեմների կողմից իրան ներկայացած պատգամաւորութեանը, որը խնդրել է այսուհետև կրել Թիւրքական սուլթանների նախկին պատմական հագուստը միայն:

Թիւրքական նոր կաբինէտը համարվում է ժամանակաւոր, որը նշանակված է միայն «Եւրոպային հանգստացնելու» համար: Թիւրքական քաղաքական շրջաններում դրութիւնը համարում են լուրջ, մանաւանդ ի նկատի առնելով պատերազմի հաւանականութիւնը Բօլգարիայի հետ և ալբանացիների ինքնաճանաչութեան ուժեղացումը, որոնք պահանջում են, որպէսզի իրանց պարագլուխ Իզմայիլ-Քեմալը նշանակվի ներքին գործերի մինիստր:

Պոլսի յունական մամուլը իր ցնծութիւնն է արտայայտում երիտասարդ-Թիւրքերի պարտութեան համար, հայկականը լռութիւն է պահպանում: Ցնծութեան մէջ են պահպանողական թերթերը:

Թիւրքական գեներալ-հիւպատոս Կօնդի բէյը այսօր ընդունեց ձեր թղթակցին: Խօսակցութեան միջոցին Թիւրքական այդ դիպլօմատը ասաց.

— Երիտասարդ-Թիւրքերը ամենևին իդէալիստներ չէին: Իրանց ձեռքը ձգելով իշխանութիւնը նրանք իրանց ձեռքը ձգեցին նաև ամենաշահաւէտ պաշտօնները:

Ահմէդ-Րիզան, որ առաջ Պարիզում մշտական կարօտութեան մէջ գտնվող ժուռնալիստ էր, համաձայնվեց ընդունել սուլթանից պարգև մի հոյակապ տուն: Էնվէր բէյը հեռացաւ Թիւրքիայից Բեռլինի Թիւրքական դեսպանութեան կցորդի փառաւոր պաշտօնը ստանձնելու համար:

Ալբանացիների սեպարատիզմը մեր խօսակիցը վտանգաւոր չէ համարում: Նրանք աւտօնօմիայի մասին անգամ չեն մտածում, այլ միայն ցանկանում են մօտիկ լինել սուլթանի գահին:

Թիւրքական նոր կաբինէտը զուտ ռէակցիօն չէ, այլ աւելի շուտ խառն է: Սուլթանը չէր ուզում իր դէմ թշնամացնել քաղաքական կուսակցութիւններից և ոչ մէկին:

Թեվֆիկ փաշան վստահութիւն է վայելում երկու հակառակ կուսակցութիւնների կողմից: Նա Գերմանիայի կողմնակից է, թէև Անգլիայի վստահութիւնն էլ է վայելում:

Անկասկած պրինց Սաբահ-Էդդինը նպաստեց ագիտացիայի տարածմանը զօրքի մէջ, վերջին անցքերի զարգացմանը և սուլթանի յաղթանակին:

Միջազգային միջամտութիւնը անխուսափելի է, եթէ չաջողվի երիտասարդ-Թիւրքերին իսկոյն և եթ վերականգնել կարգը: («Р. Сп.»)

—

Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, Պոլսի օտարերկրեայ դեսպաններից մի քանիսը խորհուրդ են տուել Բարձրագոյն Դրանը՝ արձակել պարլամենտը և անմիջապէս նշանակել նոր ընտրութիւններ, որպէսզի դրանով հնարաւորութիւն տրվի երկրին արտայայտվելու՝ վստահանում է նա, արդեօք, երիտասարդ-Թիւրքերին թէ՞ համակրում է «ահրարներին»: Ենթադրում են, որ նոր ընտրութիւնների արդիւնքը կը վերացնի ներքին կռուի անխուսափելիութիւնը:

Պետերբուրգում այն կարծիքն է տիրում, որ Թեվֆիկ փաշայի կաբինէտը երկար չի մնայ իր պաշտօնում, եթէ միայն նրա ձգտումների մէջ չէ մտնում սահմանադրութեան փոփոխումը սուլթանի իրաւունքները ընդլայնելու միջոցով: («Р. Сп.»)

—

Կ. Պոլիս, 3 ապրիլի

Թիւրքիայի մայրաքաղաքը փոքր առ փոքր վերստանում է այն կերպարանքը, որն ունէր նա հին ռեժիմի օրերում:

Այլ ևս ազատ չեն խօսում փողոցներում. նայում են այս ու այն կողմ, մի գուցէ մէկը ականջ է դնում նրանց:

Լուսանկարիչները վիտրինաներից վերցրել են երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի անդամների և դիմօնստրացիաների ու ընտրողական տեսարանների լուսանկարները: Այդ բոլորի փոխարէն ցուցադրել են պաշտօնեաների լուսանկարները:

Գրավաճառները թագցրել են այն բոլոր գրքերը, որոնցից ազատ ոգու հոտ է փչում:

Ականագործները ևս թագցրել են ի պատիւ սահմանադրութեան պատրաստած բոլոր շքանշանները: («Р. С.»)

Բուդապեշտ, 3 ապրիլի

Պոլսից հեռագրված է այստեղ, որ ռէակցիային ղեկավարում է Իզմայիլ-Քեմալը: Նա արդէն 16 տարի է ինչ կազմակերպում է լիբերալների գաղտնի կուսակցութիւնը: Ինքը սուլթանը նրան աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան կուսակցական պարագլուխներից որևէ մէկին: Իզմայիլ-Քեմալը ներկայումս գերիշխում է մասսաների մտքերի վրա:

Թեվֆիկ փաշան մեծ վէզիրութեան պաշտօնը ստանձնեց, համարեա, հակառակ իր կամքի, միայն նրա համար, որ զիջէ իր տեղը Իզմայիլ-Քեմալին: («Р. С.»)

—

Բեռլին, 3 ապրիլի

Ուսկիւբից հեռագրում են, որ ապստամբ ալբանացիների ու երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտին հաւատարիմ մնացած զօրքերի միջև Իպէկի և Օխրիդիի շրջակայքում կատաղի պատերազմ տեղի ունեցաւ: Ալբանացիները յաղթող դուրս եկան: Բազմաթիւ զինուորներ ու օֆիցերներ են սպանված, գրաւված են զօրանոցները, զէնքերն ու ռազմամթերքները: («Р. С.»)

—

Երիտասարդ Թիւրքերը պահանջում են սուլթանից իրանց ձեռքը յանձնել իր սիրելի Բուրհան-Էդդին որդուն, որը, նրանց ստացած տեղեկութիւնների համաձայն, յեղաշրջման գլխաւոր հեղինակն ու կազմակերպողն է:

Սուլթանի հրաժարումը գահից, չը նայելով անվճռական «հերքումներին», անկասկած, վճռված փաստ է:

Եըլդըզ-Քիօշկում սարսափ է տիրում: Սուլթանի կանայք և մերձաւորները փախչում են օտարերկրեայ նաւերը: Դեսպանների ընտանիքները հեռանում են քաղաքից: Սուլթանը փախչելու հնարաւորութիւնից զրկված է: («Баку»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնդօն, 8 ապրիլի

Համայնքների պալատում այն հարցին — ընդունե՞լ է, արդեօք, բրիտանական կառավարութիւնը Բօսնիայի և Հերցէգովինայի աննեկսիան, և ինչու՞ մերժում ստացվեց կօնֆերէնցիա գումարելու պահանջին, Մակկինօն-Վուդը պատասխանեց, որ Վիէննայի բրիտանական դեսպանը ապրիլի 4-ին աւստրօ-ունգարական արտաքին գործերի մինիստրին յանձնեց մի նօտա, որով տեղեկացվում է, թէ բրիտանական կառավարութիւնը բերլինեան դաշնագրութեան 25-րդ յօդուածը վերացնելուն համաձայն է: Այդ քայլը արվեց նրա համար, որպէսզի աւելի շահագրգռված պետութիւնները այդ հարցի առիթով համաձայնութեան գան: Դաշնագրութիւնը ստորագրած բոլոր պետութիւնները միաբան էին դաշնագրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու հարցում, և այն պայմանները, որոնք Անգլիային թւում էին էական, ապահովվեցին: (Հ. Գ.)

—

Պետական Դումայի անդամներից մի քանիսը ներկայացնում են Դումային մի հարցապնդում ուղղված ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին այն սիստեմատիկ հալածանքների առիթով, որին ենթարկվում են անդրկովկասեան երկաթուղու հայ ծառայողները, մանաւանդ վերջին ժամանակներս ծառայութիւնից արձակելու կամ հրաժարական տալ ստիպելու նպատակով: («Баку»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Լօնդօն, 8 ապրիլի

Րէյտերին հաղորդում են Թեհրանից. «Շահը յայտնեց, որ հիւանդութեան պատճառով չէ կարող ունկնդրութեան ընդունել ռուսաց հաւատարմատարին և բրիտանական դեսպանին»: (Հ. Գ.)

—

Պարսկաստանը յուզող վերջին նորութիւններից մէկը ղաջարների հարստութեան ամենաւագ պրինցի՝ Նայիբ-Սալթանէի կալանաւորութեան լուրն է: Ինչպէս յայտնի է, վերջինս շահի յանձնարարութեամբ հրաւիրել էր Թեհրանի պատգամաւորների ժողով պարսկական նոր սահմանադրութեան հիմունքները մշակելու նպատակով:

Երբեմն գահի թեկնածու Մահմէդ-Ալի շահի եղբայր Շաօ-Սալթանէն քիչ-քիչ ծախելով իր կալուածները՝ գաղտնի կերպով գնաց Թիւրքիա:

Աւելի վատթար վախճան է ունեցել շահի միւս եղբօր՝ Սալար-էդ-Դովլէի վիճակը, որին, իբրև պետական դաւաճանի, առանց հարցաքննութեան մահվան դատապարտեցին Պանովի հետ տեսակցելու համար, բայց նա կարողացաւ փախչել Էմիր-Ջէնգի դահիճների ձեռքից: Մօտ օրերս, ինչպէս ասում են, Թեհրանի մօտերքում, Էնգէլի-Թեհրան խճուղու վրա նրան բռնել են և շղթայված տարել մինիստրի մօտ: Չը նայելով օտարերկրեայ դիպլօմատների արած քայլերին, այնուամենայնիւ նրա վիճակը մնացել է անյայտ: Թէև նրանից յայտնի են, որ նա կենդանի է, բայց և այնպէս ֆարրաշներից մէկը, որն անցել է յեղափոխականների կողմը, պատմել է, թէ ինչպէս նրան սարսափելի տանջանքներով մեռցրել են: («Баку»)

—

Ապստամբված շահսեվան ձիաւորները, գրաւելով Աստարա-Արդաբիլ ճանապարհը, չեն թոյլ տալիս Ռաշիդ-ուլ-Միւլքին և Նամինի խաներին գնալ Արդաբիլից Աստարա:

Շահսեվանները հեռագրել են Աստարայի անջումանին իրանց պատրաստակամութիւնը՝ յայտնելով կռիւ մղել սահմանադրութեան համար:

Ռաշտից հեռագրով հաղորդում են, որ Ջանգլիում արիւնահեղ կռիւ է տեղի ունեցել կառավարչական զօրքերի ու յեղափոխականների միջև: Զօրքերի կորուստը հասնում է 120 հոգու: Անջումանը գրաւել է կառավարչական բոլոր հաստատութիւնները:

Ղազվինի մօտերքում ընդհարում է տեղի ունեցել յեղափոխականների և միապետականների միջև: Վերջիններս փախուստ են դիմել կորցնելով 20 հոգի սպանվածներ ու վիրաւորվածներ:

Յաղթողները պատերազմական աւարով վերադարձել են Ռաշտ: («Баку»)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 23 մարտ

Քեամիլ փաշա, նախորդ վարչապետը, իր գրաւոր բացատրութիւնները տուաւ հրապարակաւ: Ա՛լ գաղտնիք մը չէ թէ օսմ. կոմիտէն, ոտքէն մինչև գլուխը, զայրացած է անոր դէմ:

Իր յայտարարութեան մէջ քանի մը կէտերն են.

1) Խորհրդարանը երբէք վրդովուելու պատճառ չունէր. այնպէս որ շատ լաւ կրնար սպասել քանի մը օր ետքը լսելու վարչապետին պատճառաբանութիւնները՝ գործ դրուած մինիստրական փոփոխութեանց մասին:

2) Խորհրդարանին նախագահը, կոմիտէական ուրիշ երկու անդամի հետ, արդէն սուլթանին դիմած ու «անհրաժեշտ նկատել տուած» էր վարչապետին անկումը:

3) Կոմիտէն, օրեր առաջ, հեռագրած էր Բ. ու Գ. զօրաբանակները շարժման մէջ դնել, իբրև թէ սահմանադրութեան վտանգ կը սպառնար:

4) Պատերազմական մինիստրին պաշտօնանկութիւնը ստիպողական տեսած է վարչապետը, որովհետև անոր տուած զինուորական հրահանգները բանակներուն մէջ անպէտ նկատուած են, ու ատով անկարգապահութիւնը գլխաւոր պատճառ մը եղած է բանակներուն անկարգութեանն ու տկարացմանը:

5) Վարչապետը իրեն կէտ նպատակ դրած է երկրին վարչութիւնը խաղալիք չընել կոմիտէական հովերու: Այդ առթիւ կը յիշատակէ, թէ ինչպէս ասկէ 14 տարի առաջ սուլթանին ծրագիր մը մատուցած է փոխել երկրին վարչական հին դրութիւնը, բայց պալատականները տարհամոզած են Եըլդըզի վեհապետը, դէմ կեցած վարչային նոր դրութեանց և, միևնոյն ատեն, ատով ալ գոհ չեղած, Իզմիր նետել տուած էին զինքը իբրև նահանգապետ, — պատուաւոր աքսոր մը: Ասկէ ետքն է որ պալատականները, չուզելով հանգիստ թողուլ զանի Իզմիրի մէջ, երկու տարի առաջ Ռոդոս քշել տուած էին: Իր փրկութեան միակ յոյսն եղած էր վարպետօրէն փախչել Ռոդոսէ ու մտնել Պոլիս, կարծեմ, եւրոպական հսկողութեան տակ:

Բայց կոմիտէն, որպէսզի ազատօրէն խաղայ ու իր դաւադրական հնարքները գործ դնէ յաջողապէս, կասկածելի ընել տուած է արդէն գործքով ու փորձով տեսնուած հայրենասիրութիւն մը ու, իր վարկաբեկութեան վրէժը լուծելու համար, ամեն կողմ սուտ յարաձայնութիւններ հանել տուած, սահմանադրութիւնը կը բռնաբարուի ըսած, բռնապետութիւնը կը դառնայ համբաւած ու այպէս յաջողցուցած ծերունին հայրենասէրին անկումը վարչապետութենէ:

Քեամիլ փաշային յայտարարութիւնը, համեստ ոճով ու հանդարտիկ, ալ պարզած է ամեն բան. հանրութիւնը, մինչև այդ օրը օրօրուած կոմիտէական սափասուտ տարաձայնութիւններէն, հիմա կը տեսնէ ամեն բան, կը լսէ ամեն ինչ:

Ինչպէս ասկէ առաջ գրած եմ, Քեամիլ փաշան միակ անհատականութիւնն է երկրին վարչական մարդերուն մէջ, որ կրօնական մոլեռանդութենէ բոլորովին զերծ, իբր անկեղծ հայրենասէր, անարատ մնացած բռնապետական շրջանի մէջ, սիրողն եղած է երկրին յառաջդիմութեանը:

Մինչև սահմանադրութիւն՝ իրեն հաւասար մրցակից համարուած է Սայիդ փաշա. բայց մէջտեղը եղած գրաւոր յայտնութիւնները ապացուցին, որ ան՝ թէև խելացի մարդ, բան հասկցող, բայց միևնոյն ատեն սոսկալի փառամոլ մը ու ազգայնամոլական մըն է, որով Քեամիլ փաշա կը մնայ միակ վարչական մարդը:

Մենք կը ցաւինք, որ երկիրը, իր վերածնութեան սկզբնական օրերուն մէջ, կորսնցուց այն ձեռքը, որ ամենէն ճարտարն էր՝ այլ և այլ տարրերը համերաշխութեան մէջ դնելու և վերաստեղծելու երջանիկ, ազատ հայրենիք մը:

«Ծուռ քանակէն ուղիղ գիծ չ'ելլեր»-ը ժողովրդային առած է. այսպէս ալ կոմիտէական քմահաճոյքները իրերը հասցուցին այն վիճակին, որ դժգոհութիւնը սկսած է ծայր տալ այլ և այլ կէտերուն վրայ: Երկու օր առաջ, յետադիմականներու խումբ մը, ծածկուած սօֆտայական տարազով, ու գտնելով իրեն համախոհներ ու սօֆտաներ, միտինգ մը կը կազմեն բողոքելու պարլամենտի անգործութեանը դէմ և կը պահանջեն շէրիաթին գործադրութիւնը: Ասկէ առաջ նոյն շարժումը սկսած էր գաւառներու մէջ:

Հիլմի փաշային դահլիճը, որ ամեն բան խոստացող է հին դրութեամբ, հին ուղղութեամբ, կը դիտէ այս ամենը պաղարիւն կերպով, աղուէսի աչքերով, ձայն մը չի հաներ, մինչդեռ Վոսփորի շոգենաւերու դէմ բօյկօտաժին համար՝ թնդանօթի սպառնալիք կընէ ժողովուրդին:

«Բիւզանդիոն»ի դէմ սկսուած պայքարը կը շարունակուի այլ և այլ կէտերով. Դատարանը, քանի մը օրէն, պիտի զբաղի լրագրական այդ հարցովը:

Կենթադրեմ, որ «Մանզումէն» կարող չըլլայ օրինական ամեն փաստերը առաջ բերել՝ ապացուցնելու թէ «Բիւզանդիոն» վարձուած ըլլայ, 25 ոսկի ամսաթոշակով, կոմիտէի կողմէ, որովհետև կոմիտէն չպիտի ուզէ հաստատութիւն տալ, «Բիւզանդիոն» ինքն ալ, բնականաբար, իրեն հակառակ չպիտի վկայէ: Իմ կարծիքովս, այս ամբաստանութիւնը կարելի էր զանց ընել բոլորովին, ու աւելի լաւ էր սկզբունքով կռուիլ: Այսպէս՝ կարելի էր պայքարիլ իր այն գրուածքներուն դէմ, որոնցմով ջատագով հանդիսացաւ կոմիտէին ու Հիլմի փաշային, դէմ գրելով Քեամիլ փաշային: Ու ատով, օգուտ մը կըլլար ընթերցող հանրութեան, թերևս օգտուէր «Բիւզանդիոն» ալ՝ այսուհետև տարբեր ուղղութեամբ դիտելու իրերն ու մարդիկը:

Կը սպասենք նոր յայտնութիւններու:

Շահէն

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐՔԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԱՍԻՆ

«Речь» լրագիրը, խօսելով մարտի 31-ի յեղաշրջման մասին Կ. Պոլսում, այն կարծիքն է յայտնում, որ եթէ ծագած խռովութիւնները նոյն իսկ զսպվեն, բայց նրանք ցոյց են տալիս, որ Թիւրքիայում ներքին մի խմորումն է կատարվում, իսկ եթէ ի նկատի ունենանք «հիւանդ մարդի» ընդհանուր վիճակը, հեշտ է հասկանալ, թէ որքան վտանգաւոր կարող են լինել նրա համար յուզմունքները: Կարող է պատահել, որ չը նայած մեծ պետութիւնների բոլոր ջանքերին՝ «արևելեան հարցը» կը մօտենայ և կը վերաբացվի իր ամբողջ ծաւալով անպատրաստ Եւրոպայի և մանաւանդ անպատրաստ Ռուսաստանի առաջ:

«Слово» թերթը գրում է. «Մենք դեռ մի քանի օր առաջ ցոյց տուինք նոր ռեժիմի սաստիկ անկայունութիւնը Կ. Պոլսում: Ամբողջ աշխարհի ծափահարութեան արժանացած յեղափոխութեան մեղրալուսինը վերջացաւ, բայց անլուծելի մնացած հարցերը, թշնամական կուսակցութիւնների և ազգութիւնների կակօֆօնիան (վայրենի աղաղակներ) աւելի և աւելի ուժեղ թնդացին: Դեռ յայտնի չէ, թէ արդեօք անդորրութիւնը շուտով կը վերահաստատվի, բայց և այն, ինչ որ կատարվեց, խորապէս հրահանգիչ է: Մարտի 31-ի յեղաշրջման մէջ արտայայտվեց ամբողջ կենսունակութիւնը հին, մուսուլման Թիւրքիայի, որ իրան խոցոտված է զգում իր կրօնական գիտակցութեան մէջ: Նրանով նա ապրում էր անցեալում, նրանով ոտքի է կանգնած և այսօր: Որքան էլ երիտասարդ Թիւրքերը աշխատեցին հաշտեցնել օսմանցիութիւնը մահմեդականութեան հետ, պարլամենտարիզմը շարիաթի հետ, բայց դժուար է հաւատալ շարիաթի և պարլամենտարիզմի միջև եղած դաշնակցութեան ամրութեանը: Ամեն մի ծրագիր, նպաստաւոր կամ աննպաստ, ազգային կամ տեղական ազատութիւններին, հակասական կը հանդիսանայ շարիաթին և ամեն մի պետական րէֆօրմը կարող է զինուորեալ դիմադրութեան հանդիպել հաւատացեալների կողմից: Ուստի չէ կարելի յոյս դնել Թիւրքիայի որքան և իցէ հաստատուն խաղաղացման վրա, և արևելեան հարցը կը մնայ փորձաքար եւրոպական քաղաքականութեան համար: Գալով Ռուսաստանին, դա կը լինի փորձաքար նրա ամբողջ եւրոպական քաղաքականութեան համար»:

«Новое Время»-ն որոշ ասում է. «Օսմանեան կայսրութեան մէջ սահմանադրական կարգի հաստատութիւնը սպառնում էր մի քանի մեծ պետութիւնների շահերին: Մի քանի օրից յետոյ կը յայտնվի, թէ ո՞վ է կանգնած այն զինուորական ապստամբութեան ետևից, որ ուղղված է նոր կարգի դէմ Թիւրքիայում»:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

«Թայմս» լրագիրը առաջնորդող յօդուած է նուիրում Թիւրքիայի ներքին գործերին: Լրագրի խօսքով, մերձակայ ապագայում Թիւրքիայում հերթական է դառնալու ադմինիստրատիւ վարչութեան վերակազմութեան հարցը զանազան նահանգներում, և այն ժամանակ Թիւրքական պարլամենտը ստիպված կը լինի լուծել թէ բոլոր եւրոպական նահանգներին և թէ ասիական նահանգներից շատերին ինքնավարութիւն տալու հարցը: «Թայմս» ասում է, որ Թիւրքաց ազգութիւնների ձգտումները դէպի ինքնավարութիւն՝ անպայման համակրութիւն կը գտնեն Անգլիայում, ուր հասարակական կարծիքը ինքնավարութեան գաղափարի մէջ տեսնում է Թիւրքիայի քաղաքական կեանքի բոլոր բարդ խնդիրների խաղաղ լուծման միակ միջոցը:

«Դէյլի Նիւս» լրագիրը մատնացոյց է անում հասարակական տրամադրութիւնների փոփոխութեան վրա Կ. Պոլսում: Գերմանաաւստրիական ազդեցութիւնները դուրս են մղում անգլիական ազդեցութիւնը, դաշնակցութեան գաղափարը Աւստրիայի հետ նախկին դիմադրութեան չէ հանդիպում: Ռուսաստանի ձգտումները Դարդանէլում կարող են միայն ուժեղացնել աւստրիասիրական պրօցէսը: Ռուս-Թիւրքական յարաբերութիւնների վրա վատ ազդեցութիւն է անում և Ռուսաստանի քաղաքականութիւնը Պարսկաստանում: Թիւրք հասարակութիւնը գլխովին պարսկական սահմանադրականների կողմն է: Ռուսաստանի մտնելը Պարսկաստանի սահմաններում, Ատրպատականի գրաւումը այն հետևանքը կունենայ, որ Թիւրքերը զօրքեր կուղարկեն Թաւրիզ: Անգլիան այդ պատճառով պէտք է խորհուրդ տայ Ռուսաստանին՝ չը խառնվել պարսկական գործերի մէջ: «Առ հասարակ, — ասում է «Դէյլի Նիւս», — անգլիական բարեկամութիւնից Ռուսաստանի հետ՝ ազատութեան գործը ամենևին չը շահեց: Ընդհակառակն, Թիւրքիայի հետ բարեկամութիւնը օգնում է սահմանադրական շարժմանը Մերձաւոր Արևելքում, իսկ դրա հետևանքն է արևելեան հարցի խաղաղ լուծումն»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 6-ի երեկոյեան ժողովում, Թիֆլիսի ժողովրդական համալսարանի վարչութեան առաջ դրված էր լինել չը լինելու հարցը: Մարտի 30-ին տրված պարահանդէսը, որ վարչութիւնը կազմակերպել էր իր դրամական միջոցը բարելաւելու գլխաւոր նպատակով, այնքան անյաջող անցաւ, որ իր ծախքերը ծածկել իսկ հազիւ կարողանայ:

Ունեցած գումարով ուսումնարանները պահել կարելի է երկու ամսից ոչ աւել: Արդ՝ ինքն ըստինքեան հարց է ծագում, թէ ինչ միջոցներով վարչութիւնը պիտի պահի իր գոյութիւնը: Եղան առաջարկողներ զբօսանք սարքելու, բայց շատերի կողմից հակառակ կարծիքներ լսվեցին: Վերջը կանգ առան առ այժմ անդամակցական վճարները հաւաքելու գործը արագացնելու վրա միայն:

Ամսիս 26-ին, Գօգօլի արձանի բացման օրը, որոշվեց ժողովրդական տանը հայերէն և վրացերէն լեզուներով դասախօսութիւններ կարդալ Գօգօլի մասին, որի թոյլտւութիւնը ստացված է: Վարչութիւնը դիմելու է պ. Զաքարեանին և պ. Գելէիշվիլուն կարդալու:

Ամսիս 10-ից յետոյ, ամեն ուրբաթ օր, ժողովրդական տանը Թուրքաց սեկցիան ցերեկով տալու է հանրամատչելի ներկայացումներ Թուրքերէն լեզուով, կարճառօտ բացատրական նախաբանով:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Էջմիածին, 4 ապրիլի

Այսօր, առաւօտեան վաղ, ճեմարանի սաները տեսուչ Մ. Բերբերեանի և մի քանի ուսուցիչների հետ ոտով գնացին Սև Ջուր: Զբօսանքի նպատակն էր ամբողջ տարին վանքի բանտային պարիսպների մէջ անցկացնող աշակերտների, նամանաւանդ փոքրերի ուղեղի թարմանալուն նպաստել: Տեսչի կարգադրութեամբ ճեմարանից տարան նաև ճաշի համար անհրաժեշտ պարագաներ, ազատ օդի մէջ ուրախ ժամանակ անցկացնելու համար: Եւ օրվայ մեծագոյն մասը այնտեղ անցկացնելուց յետոյ, երեկոյեան հովով կրկին ոտով վերադարձան ճեմարան:

Ինչպէս լսում ենք, Մ. Բերբերեանը մտադիր է այս տարվայ VI դասարանցիների հետ, աւարտական քննութիւններից յետոյ, մի փոքր էքսկուրսիա կատարել, հաւանօրէն դէպի Անիի կողմերը:

Այս առաւօտ, ժամը 8-ի մօտերը, տեղիս աղաներից մէկի ծառայի կինը, կռուելուց յետոյ իր ամուսնու հետ, վրդովված եկաւ Ներսիսեան լճի ափը և, մի փոքրիկ տատանվելուց յետոյ, իրան ձգեց ջուրը, սակայն լճի պահապան Գերասիմը ազատեց նրան:

Իկս Իգրեկեան

—

Ախալցխա, 5 ապրիլի

Ապրիլի 4-ի երեկոյեան, քաղաքիս ակցիզային չինովնիկ Կաղաչկինը, երբ ստրաժնիկի հետ գիւղից վերադառնալիս, ինչպէս լսեցինք, Աբասթումանեան ճանապարհի վրա, քաղաքից 9—10 վերստ հեռու, պատահում է 4 կասկածելի անձերի, որոնք յանկարծակի սկսում են անընդհատ կրակել ստրաժնիկների վրա: Փոխադարձաբար տեղի է ունենում երկու կողմերից հրացանաձգութիւն։ Այս միջոցին սպանւում է սարաժնիկներից մէկը, ազգով ռուս։ Իսկ միւսները անվնաս գալիս են, թողնելով սպանվածին այնտեղ. իսկոյն նրանց ետեւից գնում է սարաժնիկների խումբը, սակայն առայժմ անօգուտ։ Մութ գիշեր լինելով, ինչպէս լսեցինք, չեն ճանաչել, թէ ովքեր են եղել այդ մարդիկ։ Ջիերից իջնելու ժամանակ, ձիերը իսկոյն գալիս են Ախալցխա։ Բանից դուրս է գալիս, որ այդ գիշերը այդ երկու ձիերը գողացել են մի պայտառի ախոռից։ Պայտառը առաւօտեան յայտնում է իշխանութեանը իր ձիերի գողութեան մասին։ Իշխանութիւնը ձերբակալել է այդ պայտառներին, երկու եղբայրներին էլ։ Սպանված սարաժնիկի դիակը բերին քաղաքային հիւանդանոց։

Առայժմ անյայտ է, թէ ովքեր են եղել այդ կասկածելի մարդիկը։ Դրանք թողել են մի վերարկու և մի գլխարկ, իսկ իրանք գիւղացու շորերով էին, ինչպէս պատմել են սարաժնիկները։

Libre

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ապրիլի 2-ին, Ալէքսանդրօպօլի ժողովրդական դահլիճում գիւղատնտես Ս. Աթանասեան կարդաց մի դասախօսութիւն «Երկրագործութեան շահաւէտութիւնը» վերնագրով, որ գրաւել էր հետաքրքրվողների ստուար բազմութիւն։

Դասախօսը, անելով երկրագործութեան զարգացման պատմութիւնը զանազան ազգերի մէջ, անցաւ գիւղատնտեսութեան ժամանակակից դրութեանը Եւրօպայում և ապա մեզնում։ Երկար և մանրամասն կանգ առաւ հողի և բոյսի սննդանիւթերի վրա, նաև այն փորձերի, որոնք կատարվել են այդ ուղղութեամբ Եւրօպայում՝ և ապա թէ ապացուցելով պարարտանիւթերի դերը հողի և բոյսերի զարգացման համար՝ առանձնապէս շեշտեց որոշ խոտերի ցանքսի կարևորութեան վրա և պտղափոխութեան դերի։

Դասախօսութեան ընթացքում պ. Աթանասեան ցոյց էր տալիս իր հետ բերած բոյսերի, խոտերի և այլ հացաբոյսերի հաւաքածուն, մի բան, որ կենդանացնում էր դասախօսութեան նիւթը և դիւրըմբռնելի դարձնում։

Դասախօսութիւնը տևեց երկու ժամ ու կէս, որից յետոյ ներկայ եղողները վարձատրեցին յարգելի դասախօսին բուռն ծափահարութիւններով։ Եթէ օրը լի չը լինէր, այլ տօն կամ կիրակի, ունկնդիրների թիւը հաւասարապէս աւելի կը լինէր։ Դասախօսութիւնից յետոյ մօտ քսան րոպէ տևեցին ունկնդիրների կողմից նիւթին վերաբերեալ զանազան հարցեր ու փորձեր, որոնք գործնական արժէք ունէին հետաքրքրվողների համար։

Այս դասախօսութիւնը ապացուցեց, թէ որչափ մեծ կարիք է զգացվում ժողովրդի մէջ այդօրինակ պարզ, գործնական նիւթերի վերաբերեալ դասախօսութիւնների։

Ցանկալի է, որ պ. Աթանասեանը շուտ շուտ դուրս գայ ժողովրդի մէջ արծարծելու այն բոլոր հարցերը, որոնք շօշափված էին նրա դասախօսութեան մէջ։

Պ. Աթանասեան միւս օրը գնաց Համամլու գիւղը՝ այնտեղի Տնայնագործական Ընկերութեան մէջ կարդալու մի ուրիշ դասախօսութիւն սերմի, երկրագործական գործիքների և խոտաբուծութեան մասին։

Դ. Ս—եանց

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
II ՆԻՍՏԸ

Համագումարի II նիստը տեղի ունեցաւ ապրիլի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին։

Նիստը ցերեկվայ չափ բազմամարդ չէր և ճնշող մեծամասնութիւնը կազմում էին կանանց սեռի անձինք։

Նախագահ Քալանթար, բանալով նիստը, առաջարկում է ժողովին ընտրել երկրորդ քարտուղար։ Ընտրվում է Հ. Դանիէլեան։

Ապա նախագահը, յայտնելով, որ ներկայ նիստի զբաղմունքը վերաբերում է գլխաւորապէս գորգագործութեան, կարդում է Սաչխերեթի ուսուցիչ Արիստ. Փարեմուզեանի զեկուցումը «գորգագործութեան զարգացման մասին», ուր նա հանդիսանում է ջերմ պաշտպան տնայնագործութեան գորգագործութեան ճիւղին։

Ապա Քալանթար մի համառօտ, բայց հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս գորգագործութեան արդի դրութեան մասին Պարսկաստանում։ Պարզվում է, որ գորգագործութիւնը այնտեղ դեռ պահպանում է իր նախնական ոճը, բայց շնորհիւ նրբացրած տեխնիկայի շարունակում է բարձր պահել իր արժէքը վաճառականական շուկայում։ Այդ հանգամանքը, զեկուցանողի ասելով, պէտք է դրդէ մեզ հետեւելու նրանց ու նոյնիսկ մրցելու նրանց հետ։

Երկար մտքերի փոխանակութեան առարկայ է դառնում իշխանուհի Մ. Մ. Թումանեանի զեկուցումը՝ Թիֆլիսում կենտրոնական դպրոց հիմնելու մասին, որին կցված էր դպրոցի ծրագիրը։ Դպրոցի նպատակը պիտի լինի վարպետուհիներ տալ։

Այդ առիթով մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովը ընտրեց մի յատուկ յանձնաժողով դպրոցի տիպը և տեղը որոշելու նպատակով։ Ընտրվում են իշ. Թումանեան, օր. Եկմալեան, պ. պ. Փիրալեան և Կուտատելաձէ։

Այնուհետև ժողովը լսեց Գենջեանի զեկուցումը, որ ծրագրի ընդհանուր ուղղութեան խնդիրներն էր շօշափում և որտեղ նա առաջարկում էր պահել մի ընդհանուր ինժեներ-տեխնօլոգ ինստրուկտոր, Թիֆլիսում բանալ ինստրուկտորական դպրոց, մի կենտրոնական արհեստանոց և տեխնիկական բիւրօ, պահել տնայնագործական ճիւղերի համար կուլտուրապէս պատրաստված և տեխնիկական հմտութիւն ունեցող վարպետներ, ունենալ, գոնէ, առնուազն ռայոնական ինստրուկտոր ուսուցիչներ, բանալ Թիֆլիսում տնայնագործական սպառողական խանութ, հրաւիրել պարբերական համագումարներ Թիֆլիսում, նոյնպէս և ռայոնական համագումարներ։

Յ. Փիրալեան՝ Գենջեանի առաջարկները համարում է լաւ և նոյնիսկ զեմստվային ու կառավարչական պրակտիկայում ընդունված, բայց դժբաղդաբար մեծ ծախքեր են պահանջում։

Ճառախօսը գտնում է, որ մանաւանդ մեր երկրի համար անհրաժեշտ է ինժեներ-տեխնօլոգ մասնագէտ-ներկարար։

Համագումարը ընդունում է ինչպէս մի ընդհանուր ինժեներ-տեխնօլոգ ղեկավարի անհրաժեշտութիւնը ամբողջ Կովկասի համար, այնպէս և Փիրալեանի առաջարկը՝ յատուկ մասնագէտ ինժեներ-տեխնօլոգ ներկարար ունենալու մասին, յանձնարարելով Փիրալեանին տալ պատճառաբանեալ ձեւով։

Կենտրոնական ընդհանուր արհեստանոցի խնդիրը, որ գնում է Գենջեան, թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ համարվում է աւելորդ։

Վերջում Ղարախանեանը կարդում է իր զեկուցումը, տնայնագործական հին ճիւղերի զարգացումը, ուր յիշելով Թիւրքիայի ու Ալէքսանդրօպօլի շրջանի Արթիկ գիւղի օրինակները՝ ապացուցանում է, որ տնայնագործութիւնը գոյութիւն է ունեցել հայերի մէջ և զարգանալով գեղարուեստի է վերածվել։ Անկման պատճառը զեկուցանողը վերագրում է քաղաքական պայմաններին, այլ ոչ բնական մահին։ Ուստի կոչ է անում վերակենդանացնել նրան ու հրաւիրել ժողովրդին զբաղվել նրանով, քանի որ հում նիւթերը գիւղացիների մէջ ցանկալի կերպով չեն սպառվում։

Եւ որովհետև այդ զեկուցումից յետոյ այլ ևս նոր առաջարկներ չը կային, ուստի նախագահը ժամը 10½-ին յայտարարում է նիստը փակված, թողնելով միւս զեկուցումների ընթերցումը յաջորդ նիստերին։

Լ. Գ.

ՄՈՒՐՃԻ ԵՒ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ
(Արմաւիրից)

«Рѣчь» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը.

Արմաւիրը և նրան սահմանակից Կուբանի շրջանի Լաբինեան բաժնի ամբողջ տարածութիւնը, համարեա ամբողջ Կուբանեան շրջանը ահա արդէն մի տարի է, որ կատարեալ հանգստութեան են հասել։ Հասարակական որևէ շարժում մեռել է այնտեղ։ Արմաւիրը սկսեց ապրել, զուարճանալ խաղաղ կերպով և իր ծախսը ոստիկանութիւնը պահելու համար հասցրեց մինչև 45 հազար րուբլու։

Սակայն պահնորդական բաժանմունքը, պէտք է կարծել, դժգոհ էր դրանով։ Մարտի 3-ից նա սկսեց հարցուփորձերի, խուզարկութիւնների և կալանաւորութիւնների ենթարկել բնիկ և օտարաքաղաքացի հայերին—առաջ մեղմ, կարծես զգոյշ, փոքր թափով, ապա մասսաներով։ Վերջ ի վերջոյ պահնորդական բաժանմունքը այնպիսի սարսափ տարածեց հայ ազգաբնակութեան վրա, որ Արմաւիրը համարեա այն դրութեանը հասաւ, որի մէջ գտնվում էր խոլերայի ժամանակ, 1892 թւին, ջարդի ժամանակ 1905 թւին, դաշնակցականների, անիշխանականների, էքսպրոպրիատորների և ամեն տեսակ մարդասպանների սարսափի ժամանակ, որոնք սպանութիւններ էին կատարում հասարակ խուլիգանութեան և կողոպտման համար 1906, 1907 թւերին։ Համարեա իւրաքանչիւր հայ տուն լացի և կոծի մէջ է, Զատկի մասին ոչ ոք հայերի մէջ չէր մտածում։ Առաջին անգամ ձերբակալեցին վեց մարդ, երկրորդ անգամ 5, երրորդ անգամ, մարտի 18-ին, մօտ 40 մարդ։ Կալանաւորում էին, սակաւ բացառութեամբ, հասակն առած և մինչև անգամ 70 տարեկան ծերունիների, որոնք պատկանում էին, գլխաւորապէս, խոշոր դրամատէրերի դասին, մարդիկ, որոնք ոչինչ մասնակցութիւն չեն ունեցել որևէ հասարակական և մանաւանդ քաղաքական շարժման մէջ, որոնք իրանց էութեամբ և իրանց պարապմունքներով թշնամի են յեղափոխական շրջանի ամեն մի շարժմանը։ Նրանք մեղաւոր են միայն այն բանի մէջ, որ Անդրկովկասից եկած ամեն տեսակ տէրրօրիստների, գլխաւորապէս դաշնակցականների և նրանց անուան տակ թագնվածների սպառնալիքների տակ, որոնց վախճանը այն էր լինում, որ սպանվում էին նրանք, որոնք աշխատում էին ուշադրութիւն չը դարձնել այդ սպառնալիքներին, տալիս էին այդ տէրրօրիստներին փողեր, և յաճախ մեծ փողեր։ Կալանաւորվածներին տրված բոլոր հարցերը միշտ մի բովանդակութիւն ունեն՝ թէ արդեօք տալիս էր թէ չէր տալիս փող և ումն էր տալիս։ Այն բանում, որ հայերը ռէվօլվէրների սպառնալիքի տակ փող էին տալիս, մեղաւոր են միայն իշխանութիւնները, որոնք չեն կարողանում պաշտպանել բնակիչներին քաղաքական և զուտ աւազակային էքսպրոպրիատորներից. դրանում մեղաւոր է այն անհաշիւ սարսափը և այն յուսահատութիւնը, որի մէջ գտնվում էին այն ժամանակ Արմաւիրի բնակիչները։

Կալանաւորելով Արմաւիրում 50—60 հայերի՝ կը նշանակէ ամբողջ Արմաւիրը սգի մէջ գցել, որովհետև բոլոր առեւտրութիւնները Արմաւիրում կատարվում են 50—60 ընտանիքների նեղ շրջանում, որոնցից բաղկացած է Արմաւիրի բնիկ ազգաբնակութիւնը, իսկ առևտրական և արդիւնաբերական հիմնարկութիւնների տէրերի սուգը և կալանաւորութիւնը այն հետևանքը կունենան, որ կը սկսվի տնտեսական ճգնաժամ, կարձակվեն բանւորները և ծառայողները, կը սնանկանան ֆիրմաները, և ապա կը սկսվեն բանւորների և ծառայողների յուզմունքները։

1905 թւից Արմաւիրը գիտէ միայն վճարել և կորցնել՝ 1905 թւի հոկտեմբերեան ջարդը սարքողներին, ապա անիշխանականներին, դաշնակցականներին, աւազակային տիպի էքսպրոպրիատորներին և այլն։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ
(Հեռագրով)

Պետերբուրգ, 7 ապրիլի

89-րդ նիստը Խոմեակովի նախագահութեամբ բացվում է ժամը 11 և 10 րոպէին։

Հերթին դրված է քննելու արդարադատութեան մինիստրի մտցրած օրինագիծը հեղինակութեան իրաւունքի մասին՝ գրական, երաժշտական, գեղարուեստական և լուսանկարչական գրուածքների համար։

Մասնաժողովի զեկուցանող Պերգամենտը մատնանշում է, որ գոյութիւն ունեցող իրաւաբանական գիտութիւնը դեռ մի որոշ հայեացք չէ մշակել հեղինակութեան իրաւունքի վերաբերութեամբ։ Այդ հարցի նըկատմամբ կան մի քանի տեսակէտներ։ Հեղինակութեան իրաւունքի վրա մի քանիսը նայում էին ինչպէս մի արտօնութեան վրա։ Ներկայումս այդ հայեացքը քիչ կողմնակիցներ ունի։ Միւսները հեղինակութեան իրաւունքը համարում են անհատի իրաւունք։ Երրորդ կաթէգօրիայի մարդիկ այդ իրաւունքը ընդունում են իբրև սեփականութեան իրաւունք։ Այդպէս նայեց այդ առարկայի վրա քաղաքացիական օրէնսդրութիւն կազմող մասնաժողովը։ Ժամանակակից գիտութիւնը հեղինակութեան իրաւունքը մեկնում է իբրև բացառիկ իրաւունք jus sui generis. Իրաւաբանական տեսակէտից վերոյիշեալ աշխարհահայեացքներից ոչ մինը անպայման ճշմարիտ համարել չէ կարելի։

Այնուհետև զեկուցանողը մանրամասնաբար կանգ է առնում հեղինակութեան իրաւունքի վրա երաժշտական գրուածքների համար և թարգմանութիւնների իրաւունքի հարցի վրա և յետոյ պատմում է, թէ ինչպէս մինիստրի օրինագիծը քննութեան է ենթարկվել դատական բարենորոգումների մասնաժողովի և զանազան գիտական ու կրթական ընկերութիւնների մէջ։

Վերջապէս զեկուցանողն անցնում է օրինագծի հիմնական կէտերին, կանգ է առնում հեղինակութեան իրաւունքը ճանաչելու, հեղինակութեան իրաւունքի սուբեկտ և օբեկտ հարցերի և այդ իրաւունքի ծագման խնդրի վրա։

Լևաշկևիչն ամբողջովին պաշտպանում է այն հիմնական թէզիսները, որ մշակել է Պետերբուրգի գրական ընկերութիւնը, որոնցից ամենագլխաւորներն են.—հեղինակութեան իրաւունքը ներկայանում է սեփականութեան առանձին մի տեսակ, որ թարգմանութեան իրաւունքը պէտք է ազատ լինի, որ հեղինակութեան իրաւունքի ժամանակը պէտք է դարձնել 30 տարի, որ հեղինակի մահից յետոյ նրա իրաւունքն անցնում է միայն կնոջը և մերձաւոր ազգականներին և այլն։

Միլիւկովը յայտնում է, որ, ինչպէս ռուս վիպասան (աղմուկ, շարժում, ծիծաղ աջակողմում), նա մի շարք առարկութիւններ ունի զեկուցանողի տեսակէտների դիմաց։ Հարցը նա քննում է ոչ թէ կուսակցական տեսակէտից, այլ իբրև մի շարք հրատարակչական ընկերութիւնների ներկայացուցիչ։ Պետերբուրգի գրական ընկերութեան հիմնական թէզիսները Միլիւկովը հնարաւոր չէ գտնում ամբողջապէս իր պաշտպանութեան ներքոյ առնել, համարելով նրանց իրաւաբանական պատճառաբանութիւնը շատ կէտերում պակասաւոր։

Հռետորը նկատում է, որ մանրամասն կը խօսէ յօդուածային քննութեան ժամանակ. Նրա կարծիքով երկու խոշոր հակասութիւններ ունի օրինագիծը. մինիստրութիւնը և ռուս գրողները կարծում են, որ նոր օրէնքը պէտք է պաշտպանէ հեղինակութեան իրաւունքը այն սահմաններում, որոնք չեն հակասում ռուս ժողովրդի կարիքներին և օգուտներին, բայց իբրև լիակատար հակասութիւն դրան աչքի է ընկնում այն կէտը՝ թէ պէտք է ուժեղացնել հեղինակութեան իրաւունքի պաշտպանութիւնը արևմտեան պետութիւնների հետ կոնվենցիա կապելու նպատակով։ Այդ տեսակէտից հեղինակութեան իրաւունքի պաշտպանութիւնը չէ համապատասխանում Ռուսաստանի ազգային շահերին։ Ինչ չափով առաջին թէզիսը, որ համակերպվում է ռուս գրողների կարծիքների հետ, պէտք է ողջունել, նոյն չափով վտանգաւոր և Ռուսաստանի համար վաղաժամ է երկրորդ թէզիսը, որի նպատակն է պաշտպանել օտարազգի հեղինակների իրաւունքները։

Արդարադատութեան մինիստր, միանգամայն համաձայնելով մասնաժողովի զեկուցումի հետ, իր պարտքն է համարում վկայել, որ այժմեան օրինագծի նպատակն է պաշտպանել միայն ռուս հեղինակների իրաւունքները։

Միլիւկովը գտնում է, որ մինիստրի մեղքը կայանում է նրանում, որ նա հարկաւոր պաշտպանութեամբ չէ վերաբերվում հասարակութեան շահերին։ Մինիստրը հեղինակների իրաւունքները պաշտպանելու գործում անգամ առաջ է գնացել, քան կը ցանկանային իրանք գրողները։ Մինիստրի տեսակէտը իրաւաբանօրէն սխալ է և հեղինակութեան ինքնասիրութեան համար ամօթալի։ Հեղինակի իրաւունքը միանգամայն նման է ձեռք բերողի իրաւունքներին. հեղինակի և հասարակութեան միջև գոյութիւն ունի լռելեայն համաձայնութիւն։

Կապուստինը գտնում է, որ օտարազգի հեղինակների գրուածքները թարգմանելով մարդ շահագործում է իսկապէս առանց որևէ վարձատրութեան ուրիշի աշխատանքը, ուրիշի ձիրքը և տաղանդը։ Ուրիշի շահերը անտես անելը մեզ համար շահաւէտ է, բայց ըստ էութեան անվայել է դա մեծ պետութեան համար։

Հռետորների ցուցակը փակվում է։

Պերգամենտի խօսելուց յետոյ քուէարկութեամբ Դուման որոշում է դիմել յօդուածային ընթերցման։

Ժամը 12 և 59 րոպէին յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 15 րոպէին։ Նախագահում է իշխ. Վոլկոնսկին։

Յօդուած առ յօդուած, ամբողջ օրինագիծն ընդունվում է, միայն մի քանի յօդուածների վերաբերութեամբ լինում են յաւելումներ և կրճատումներ. այսպէս՝ չորրորդ յօդուածի երկրորդ մասը, որ ասում է «օտարազգի հեղինակների իրանց այն գրուածքների հեղինակութեան իրաւունքը, որոնք լոյս են տեսնում արտասահմանում, Ռուսաստանում ճանաչվում է ինչչափով այն պետութիւններում, որոնց հպատակներ նրանք ներկայացնում են, ռուսահպատակների հեղինակութեան իրաւունքը վայելում է նոյն տեսակ պաշտպանութիւն», դուրս է ձգվում։

7-րդ յօդուածը ընդունվում է Միլիւկովի հետեւեալ լրացումով. «Եթէ հինգ կամ աւելի տարուց յետոյ, հեղինակի մահից յետոյ, նրա գրուածքներից որևէ մէկը որևէ պատճառով բացակայում է գրքերի շուկայում և հեղինակի իրաւաժառանգները մտադրութիւն չունեն նրան վերստին հրատարակել, այն դէպքում ամեն մի ցանկացող մարդ կարող է այդ անել հետեւեալ պայմաններով. նախ՝ նախօրօք իր մտադրութեան մասին տեղեկացնելով ժառանգներին, երկրորդ այդ մասին յայտարարելով մամուլի աւելի շատ տարածված օրգաններից մէկում (ձայն աջակողմից՝ «օրինակ «Рѣчь»-ում...»), երրորդ՝ երկու տարի սպասելով տեղեկացնելու և յայտարարելու օրից»։

10-րդ յօդուածի նկատմամբ, որ 50 տարվայ միջոց է որոշում հեղինակի մահից յետոյ, որ ժառանգները իրաւունք ունեն հրատարակել հեղինակի հեղինակութիւնները, ընդունվում է 30 տարի ժամանակամիջոցը։

23-րդ յօդուածի առիթով արդարադատութեան մինիստրը ընդունել է տալիս իր առաջարկութիւնը, որպէսզի վիճվող անձը գանգատով քաղաքացիական դատարանին դիմելուց յետոյ զրկվում է գործը քրէական դատարանին յանձնելու իրաւունքից։

54-րդ յօդուածը ընդունվում է մինիստրի հետեւեալ լրացուցիչ բանաձևով. «Գեղարուեստական գրուածքի հեղինակութեան իրաւունքի խախտում չէ ճանաչվում, երբ մէկը առանձին գեղարուեստական գրուածքները ինքնուրոյն կերպով ուսումնասիրում է և առանձին գրքով հրատարակում է, մանաւանդ երբ այդ գիրքը կրթական կամ թէ բնագիրը բացատրելու միակ նպատակով է։ Գեղարուեստական գրուածքի վերարտադրութեան ժամանակ պէտք է նշանակված լինի նրա հեղինակի անունը, ինչպէս և եթէ գրուածքն առնված է ուրիշ գրուածքից կամ հրատարակութիւնից, այդ հեղինակութեան կամ հրատարակութեան վերնագիրը»։

Նիստը փակ է ժամը 5 և 57 րոպէին։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ժողովրդական համալսարանի կենտրոնական վարչութիւնը, ինչպէս յայտնի է, միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, որ թոյլ տրվի տեղական լեզուներով (հայերէն, վրացերէն, թուրքերէն) ժողովրդական հանրամատչելի դասախօսութիւններ կարդալ և դասընթացքներ հաստատել։ Թէև այս միջնորդութեան արդիւնքը յայտնի չէ, բայց Թիֆլիսի նահանգապետը թոյլ տուած լինելով Գօգոլեան տօնախմբութիւնների առիթով տեղական լեզուներով դասախօսութիւններ կարդալ, ապրիլի 26-ին, Գօգոլին մահարձան կանգնեցնելու օրը, Զուբալովի ժողովրդական տան մէջ կը կայանայ հայերէն դասախօսութիւն Գօգոլի մասին։ Կը դասախօսէ պ. Պետրոս Զաքարեան։

◆ Հասարակական կլուբում վաղը, շաբաթ, Ա. Վիլլիամս կը կարդայ մի ռեֆերատ անգլիացի յայտնի բելլետրիստ Կիպլինգի կեանքի և գրուածքների մասին։

◆ Ուսումնարանական տեսուչ Մ. Ֆիշէր մի մանրամասն զեկուցագիր է կազմել նոր տիպի արհեստանոց-դպրոցներ բանալու հարցի մասին։ Այս տեսակի արհեստանոց-դպրոցներում ընդունվելու են մինչև 17 տարեկան հասակ ունեցող արհեստաւոր աշակերտներ։ Զեկուցագիրն ուղարկված է զանազան հաստատութիւններին և պաշտօնական անձերին՝ ծանօթանալու համար։

◆ Մեղուաբուծութեան և շերամապահութեան ամառային դասընթացքները կովկասեան շերամապահական կայանում վճռված է բանալ յունիսի կէսերին։

◆ Շուտով կը սկսէ գործել մի նոր կլուբ, որի հիմնադիրները վրացիներ են. կանոնադրութիւնը հաստատված է։

◆ Անցեալ ուրբաթ, ապրիլի 3-ին, Գայիանեան օրիորդաց դպրոցի շէնքում, Շուշու թեմական դպրոցի երաժշտութեան ուսուցիչ պ. Ս. Մելիքեան կարդաց մի դասախօսութիւն «Երաժշտութեան զարգացման անհրաժեշտութիւնը մեզանում» թեմայով։ Այս ռեֆերատի մասին պ. Ե. գրել էր մի ընդարձակ յօդուած, որը սակայն հնար չը կայ տպելու «Մշակում» հերթական ամենաանհրաժեշտ նիւթերի շատութեան պատճառով։ Երբ նոյն նիւթին վերաբերեալ տեսութիւն լոյս կը տեսնէ, երբ նոյն ռեֆերատը,—ինչպէս որոշվել է դասախօսութեան երեկոն,—ամբողջովին կը հրատարակվի «Նոր Դպրոց» ամսաթերթում։

◆ Ղուբայի շրջանի կառավարիչը յօգուտ Իտալիայի երկրաշարժից վնասվածների ժողովելով 3162 ռ. 77 կոպէկ ուղարկել է կոմսուհի Վորոնցովա-Դաշկովային, որով նախկին հանգանակված գումարի հետ այդ նպատակով եղաւ 26,943 ռ. 53 կոպէկ։

◆ Այսօր նշանակված է Կովկասեան Իրաւաբանական Ընկերութեան նիստը։

◆ Կիրակի դէպի Մցխէթ կը մեկնեն այնտեղի հնութիւնները դիտելու համար «Բնութեան սիրահարների ընկերութեան» անդամները։

◆ Վրաց գրասիրաց ընկերութեան գլխաւոր վարչութեան վերջին նիստում որոշվել է 600 րուբլի յատկացնել «գուջաների» հրատարակութեան համար (Վրաստանի պատմական փաստաթղթեր)։

◆ Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին ապրիլի 8-ին ներկայացել է Թագաւոր Կայսրին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ապրիլի 8-ին էլեկտրաքարշի վարչութեանը առաջարկեց անմիջապէս 2000 րուբլի մուծանել քաղաքային գանձարկը Մուխրանեան կամուրջի աշխատանքների համար, համաձայն կապված պայմանագրի։

◆ Լեռնային ինժեներ Ուստեմովիչը միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, որ թոյլատրվի իրան Թիֆլիսում մի արհեստանոց հիմնել լեռնարդիւնաբերական նպատակներով պայթուցիկ նիւթեր պատրաստելու համար։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Ապրիլի լոյս 4-ի գիշերը խուզարկու ոստիկանութեան գործակալները 9-րդ ոստիկանամասի երկաթուղային շրջանամասում Բարկինի տանը մի ինչ-որ կառապանի աջակցութեամբ երևան են հանել եռագծեան հրացանների [illegible] պահեստ։ Խուզարկելով ամբողջ տունը, ոստիկանները այնտեղ ապրող Շուշու գաւառի Ենգիբենդ գիւղի բնակիչ Ղարախան Աղաջանեան Ջաւադեանի բնակարանում գտել են 1000 հատ փամփուշտ։ Կալանաւորված Ջաւադեանի ցուցմունքով, այդ փամփուշտները նա ստացել է Վարշավայից վաճառելու նպատակով, բայց դեռ չէ կարողացել վաճառել։ Նրա հետ միասին կալանաւորված է և նոյն բնակարանում ապրող Իսրայէլ Գրիգորեան Աւանէսեանը։

◆ Դեռ ևս անցեալ տարի դեկտեմբեր ամսին տ. Սողոմոնեանցը խնդրամատոյց էր եղել գեներալ Ֆօլբաումին՝ թոյլտւութիւն ստանալու «Մանկական աշխարհ» «Дѣтскій міръ» անունով մի ընկերութիւն հիմնելու համար խորհրդակցական ժողով գումարելու։ Այդ թոյլտւութիւնը ստացվել է մօտ օրերս միայն։ Առաջին խորհրդակցութիւնը տեղի կունենայ ապրիլի 12-ին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, ապրիլի 7-ին, արքունական թատրոնում Բոսէքի և Գրիշինի դրամատիկական խումբը ներկայացրեց Սենկեվիչի «Quo Vadis» («Յո՞ Երթաս») նշանաւոր վէպից կազմված համանուն պիէսան, որ բեմի համար յարմարեցրել է դերասան Մօրօզիկօվ-Սամարինը, որի ղեկավարութեամբ և բեմ դրվեց պիէսան։ Ներոնի դերը կատարում էր Վերեսանովը, Մարկ Վինիցի դերը՝ Օրլօվ-Չուժբինին, յոյն Կէֆասի (Խիլոնի) դերը՝

Բուէրը, իսկ Պետրոնիի դերը կատարում էր ինքը Սօբոլշիկով-Սամարինը:

Պէտք է ասել, որ Ս.-Սամարինի փոխադրութիւնը կատարված է շատ գեղեցիկ, պատմական և գեղարուեստական ճշգութիւնների պահպանութեամբ: Պետրոնիի և Մարկի տիպերը վերին աստիճանի կատարելագործութեան հասան Սամարինի և Օրլօվի խաղով: Թատրոնը ծայրէ ծայր լի էր:

—

Մեծ-Ղարաքիլիսա, 5 ապրիլի

Շաբաթ, ամսիս 4-ին, տեղիս տղայոց դպրոցի դահլիճում տեղական սիրողները, ուսուցիչների հետ միասին, ներկայացրին «Ոճրագործի ընտանիքը» պիէսը յօգուտ տեղակ. երաժշտ. նուագախմբի: Ցանկալի էր, որ մեր սիրողները ներկայացման համար ընտրէին աւելի դիւրըմբռնելի կօմեդիաներ, որոնք մեր հասարակութեանը աւելի հասկանալի կը լինէին և աւելի բաւականութիւն կը տային:

Խաղը թոյլ անցաւ: Բացի մի երկու դերակատարներից՝ մնացածները աջողութիւն չունեցան: Շատերն իրանց դերերը չը գիտէին: Դահլիճը, համարեա, լիքն էր: Մուտքը բաւարար էր:

Մեր հասարակութիւնը քիչ-քիչ սովորում է թատրոն յաճախել և հաշտվել թատրոնի գաղափարի հետ: X.

ՄԱՄՈՒԼ

Բուլղարիայում հրատարակվում էր մի տխրահռչակ հայ թերթ «Ռազմիկ» անունով, որի խմբագիրն էր դաշնակցական Ռուբէն Զարդարեան, հերոս իր տեսակի մէջ: Նրա վրա ծանրանում էր, ի թիւս այլ սխրագործութիւնների, նաև մեղադրանքը այն սխրագործութեան, որ նա յանուն հայրենիքի փրկութեան ժողովել էր Հայաստանի մի քանի գիւղերի եկեղեցիների թանգագին սպասները և «իր անձը գոհում էր» Բուլղարիայում:

Բնական է, որ այդպիսի վեհ յատկութիւններով օժտված մի խմբագրի ղեկավարութեամբ հրատարակվող թերթը ունենար և նոյնպիսի վեհ յատկութիւններ: Եւ, ճշմարիտ, այդ թերթը ամբողջ ժամանակ պահպանեց փողոցային օրգանի բոլոր յատկութիւնները: Նրա համար «սրբազան կուսակցութիւնից» դուրս մնացող հայը, ով և լինէր, հայ չէր, այլ մօլթանի, սրիկայ, երեւի նրա համար, որ այդ հայը Հայաստանի գիւղերի եկեղեցիները մաքրելու փառքը և պատիւը թողել է Ռուբէն Զարդարեանին:

Եւ ահա—ով մեծ ի ցաւոցս—«Ռազմիկը» այս տարվայ մարտի 31-ին գուժում է հայ ժողովրդին, թէ նա դադարեցնում է իր գոյութիւնը, այլ ևս չէ բաղդաւորեցնելու ապերախտ հայ ազգը իր կենարար շնչով, որովհետև—ով բաղդաւորութիւն—հայ ազգի և Հայաստանի փրկութիւնը այլ ևս կատարված է, վերջացած և այժմ պէտք է գնալ միայն Բոսֆորի գեղազուարճ ափերին հանգստանալու յաղթանակի դափնիների վրա և սխրագործութիւնը այնտեղ շարունակելու:

Հրատարակելով իր վերջին թիւը, տալով ինքն իրան փառաւոր դիպլօմ, հաւատացնելով հայ ժողովրդին թէ «իր բարոյական ձգտումները եղան անշահախնդիր, վեր ամեն կասկածէ, հեռու կեղծիքէ և հայ մամուլը արատաւորող անհատական շահախնդրութենէ ու հաշիւներէ» (Հայաստանի գիւղերի եկեղեցիների բարեզարդի մասին ոչ մի խօսք), «Ռազմիկի» «խաղաղ և հանդարտ խիղճը» յանկարծ այնպէս յուզվում, ալեկոծվում է, որ ընթերցողը մի րոպէ շուարած մնում է, թէ արդեօք ինչ պատահեց, ինչո՞ւ այդքան գազանային կատաղութիւն, ինչո՞ւ այդքան ահեղ կրճտումն ատամանց, ինչու, այն րոպէին, երբ «Ռազմիկ» իր դադարումը, իր մեկնումը, չքացումը կամենում է բացատրել գործի յաղթանակով, յանկարծ կատաղած գազանի նման յարձակվում է այն թերթերի և անձանց վրա, որոնք նրա հետ համամիտ լինելու, նրա սխրագործութիւններին մասնակից լինելու, նրա հայրենասիրական (իմա հայրենակործան) վեհ ձգտումները բաժանելու առաքինութիւնը չեն ունեցել:

Հանելուկը պարզվում է նրանով, որ «Ռազմիկ» իր չքացումը վերագրում է իր այդ հակառակորդներին: Եւ այդ հակառակորդները, որոնք ցրված են Բալկաններում, Ամերիկայում, Եգիպտոսում, նոյնիսկ Հայաստանում և մանաւանդ Կովկասում, ոհ, որպիսի մեծ հրճուանքով, ուրախութեամբ, գազանային ախորժակով կը բզքտէր «Ռազմիկը», կը յօշոտէր, իբրև գիշակեր, որովհետև անոնք, այդ հակառակորդներն են պատճառ, որ փառապանծ ռազմիկեանները այսօր հալածանքի, ատելութեան են մատնված և բանտերը նետված:

Եւ, տարակոյս չը կայ, «Ռազմիկը» չէ մոռանում յայտնել, որ մեծ ախորժանքով կը գիշատէր և Հ. Առաքելեանին, և Ալ. Քալանթարին, և «Մշակ» թերթը, և Էջմիածնի կենտրոնական ժողովի, Յովնանեան դպրոցի դէմ գործողներին, և Թիֆլիսի Հանգանակիչ Մասնաժողովի անդամներին և, վերջապէս, ռուս կառավարութիւնը: Տեսնո՞ւմ էք, ընթերցողներ, այն փաստաբանները, որոնք մի ժամանակ Յովնանեան դպրոցի իրաւունքները ոտնակոխ անողների դէմ ձայն բարձրացրին, այն անձինք, որոնք Էջմիածնի կենտրոնական ժողովի ժամանակ թոյլ չը տուին որ «ռազմիկեանները» քանդեն Էջմիածինը, հողերը բաժանեն թուրքերին, հայ գիւղացիներին զրկեն հացից, դրանք ամենքը ռուս բռնակալ կառավարութեան գործակալներն են, դրանք ամենքը հայրենիքի դաւաճաններ են:

Մենք միայն կարող ենք ապահովել Ռուբէն Զարդարեանին, որ որքան էլ նա մեծ մարդ, մեծ հայրենասէր, ազգային փրկիչ և ազատարար լինի, որքան էլ մեծ հերոս լինի, բայց եթէ, տէրը մի արասցէ, կամենայ իր շնորհաբեր գալուստով այցելել մեր երկիրը, նոյն փաստաբանները չեն կարող ուրիշ ոչ մի կարծիք յայտնել դարձեալ, քան այն, որ գիւղի եկեղեցիների սպասները կողոպտողը «հայրենիքը փրկելու դիմակի տակ» և Բուլղարիայում զուարճացողը՝ մեզանում, այդ բռնակալ ռուս կառավարութեան օրէնքներով, անմիջապէս կուղարկվի տաժանակիր աշխատանքների, Սիբիրի խորքերում: Եւ դաշնակցական ոչ մի հերոսի փառքն ու համբաւը չի համոզի այդ փաստաբաններին տալ ուրիշ կարծիք:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 9 ապրիլի

«Գործ» թերթը, ճարը կտրած, դիմել է այժմ մի նոր ֆոկուսի՝ իր կարծիքով որպէս թէ «Մշակը» վարկաբեկելու, ինչպէս և անձնապէս ինձ: Նա իր մեծ էջերը մի կերպ լցնելու համար կամ անհագին յօդուածներ է տպում, ցոյց տալու համար, թէ իմ կազմած «Ձեռնարկը» ոչ թէ ինքնուրոյն հեղինակութիւն է, այլ զանազան կտորները թարգմանված են Լիվանովից և ուրիշներից—մի բան, որ ես ինքս յիշել և ասել եմ «Ձեռնարկի» մէջ, կամ թէ զանազան մութ անկիւններից, զանազան կասկածելի մարդկանց ձեռքով գրված նամակներ է տպում, զանազան հարցեր անելով 10—12 և նոյն իսկ 20 տարի առաջ ստացված գումարների մասին և կամ պարզապէս արդէն իբրև գող մեղադրված, վարկաբեկված ex վարդապետների լեզուով կատարեալ ստութիւններ է թխում և չեղած բաներ հնարում:

Այդպիսի խուլիգաններից մինն ևս հանդիսանում է չիք-վարդապետ, տխրահռչակ Արսէն Ղլչեանը, որի սխրագործութիւնները հայ հասարակութեան շատ լաւ յայտնի են: Այդ նախկին վարդապետը, ինչպէս հանրածանօթ է, Թիֆլիսի վիճակային արդիւնքներից գրպանելով աւելի քան 1500 ր. և ծախսելով անառակութեան մէջ, հնարեց սուտ, թէ գրպանից, Սօլդատսկի բազարում գողացել են: Այդ սուտը չընդունվեց և Արսէն վ. Ղլչեանը յանձնվեց քրէական դատարանին իբրև յանցաւոր: Ապա, կամենալով մի կերպ ազատվել, նա թողեց փարաջան և թիկն տուեց «ազգային փրկիչներին» և փախաւ Շվէյցարիա, ուր շվէյցարական լճերի ափին վայելում է իր քաջութեան արդիւնքը: Գործը դատարանում դեռ շարունակվում է և Ղլչեան չիք-վարդապետը բնաւ հոգ չէ տանում մաքրելու իր աղարտված համբաւը և պատիւը:

Այժմ ահա այդ չիք-վարդապետի և վիճակային արդիւնքների գողութեան մէջ մեղադրվող խուլիգանի օգնութեանն է դիմել խաչմանեանների (նման զմանն սիրէ) օրգան «Գործը» և հարցնում է «Մշակից»՝ թէ ինչ է եղել անգլիացի Ֆիցջէրալդի օգտին հաւաքած գումարը, իսկ ինձանից ևս հարցնում է՝ թէ ինչո՞ւ հաշիւ չեմ տալիս Թէհրանի կենտրոնական դպրոցի համար որպէս թէ իմ ձեռքով գրված մի րուբլիանոց տոմսակների մասին:

Ոչ թէ գող Արսէն Ղլչեանին պատասխանելու համար (դա կը լինէր ամեն արժանապատուութիւնից ստոր), այլ մի անգամ ևս թոյլ չը տալու որևէ կասկած, որ կարող էր ծագել որևէ ընթերցողի մտքում, և վերջապէս ցոյց տալու համար հայ հասարակութեան, թէ «գործականները» որպիսի բարոյական խոր տիղմի մէջ են թաւալվում իրանց այդ տեսակ, միայն սև-հարիւրեակներին և պատեհապաշտ խուլիգաններին վայել յարձակումներով «Մշակի» և իմ դէմ, ես հարկ եմ համարում յայտնել, որ 1) անգլիացի Ֆիցջէրալդի ընտանիքի օգտին հանգանակված գումարը եղել է 14—15 տարի առաջ, պ. Խաչատուր Մալումեանի օրով և կարգադրողը նա է եղել. ես այդ ժամանակ նոյնիսկ խմբագրութեան մէջ չեմ եղել, բայց գիտեմ, որ հանգանակված գումարը ուղարկվել է տիկին Ֆիցջէրալդին և նրա շնորհակալութեան ու ստացման նամակը տպված է «Մշակում». 2) երբեք ես ոչ մի րուբլիանոց տոմսակ չեմ բաց թողել Թէհրանի կենտր. դպրոցի օգտին և այդ նպատակով ումից և իցէ մի կոպէկ անգամ չեմ ստացել: Եղել է մի ժամանակ, կարծեմ 1900 թ., մի ընդհանուր կոչ հայ հասարակութեան՝ օգնել Պարսկաստանում կենտրոնական դպրոց հիմնելու, բայց ես ոչ մի տեղեկութիւն չունեմ թէ ով և իցէ մի րուբլիանոց տոմսակ է բաց թողել յօգուտ այդ դպրոցի: Իմ վերաբերմամբ դա կատարեալ և անամօթ ստութիւն է, որպիսին կարող է հնարել միայն ղուլդուրական Արսէն Ղլչեանը, վիճակային փողեր իւրացնողը:

Ինչ վերաբերում է «Գործի» ոտնաւոր նէյնիմներին, ես միայն այս կասեմ՝ «մատնիչներին», պ. գործականներ, որոնեցէք դաշնակցական շարքերում. Դաւոնները այդ շարքերումն են եղել, ինչպէս և այդ շարքերից են եղել, որոնց մատնութեան շնորհիւ այսօր բանտերը լցված են շատ-շատերով, գուցէ և անմեղներով. իսկ վատնիչների համար դիմեցէք «Վտակի», «Նոր-Ալիքի», «Զանգակի» ղեկավարներին և զանազան «փրկիչներին», որոնց ջիբերումն են մինչև այսօր Հայաստանի սովեալների օգտին հաւաքված հազարները:

Մի ստիպէք մեզ աւելի դառն ճշմարտութիւններով կարմրեցնել ձեզ, եթէ միայն երբևիցէ ազգային ղուլդուրները ընդունակ են կարմրելու:

«Գործի» խուլիգանութեան այս ապացոյցը անարգանքի սիւնին գամելուց յետոյ, ես յայտնում եմ, որ այլ ևս ոչ մի հարցման և յարձակման չեմ պատասխանելու:

Հ. Առաքելեան

—

Պետերբուրգ, 31 մարտի

Թոյլ տուէք լրագրիդ միջոցով յայտնելու ի գիտութիւն հայ հասարակութեան հետևեալը:

Հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ այս օրերս տ. Վարվառէ Քանանեանը յանձնել է Մօսկվայի Լազարեան ճեմարանի վարչութեանը տասներեք հազար րուբլի, որի տոկոսներով պիտի պահվի մի թոշակաւոր աշակերտ, հայ-լուսաւորչական, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Գէորգ Քանանեանի, որը՝ յընթացս 36 տարվայ՝ տեսչի և վերատեսչի պաշտօններն էր տանում յիշեալ ճեմարանում:

Թոշակի կարգադրութիւնը տ. Վ. Քանանեանը թողել է ներկայումս իր կամքի ներքոյ և ապա՝ իր դստեր տ. Մարիամ Ակիմեանի ներքոյ:

Յովհաննէս Ռաֆայէլեան Պատկանեան

—

Թիֆլիս, 4 ապրիլի

Շարունակ 7 տարի ամբողջ ընտանիքով տանջվում ենք Կուկիայի Նորաշէն սուրբ Աստուածածին եկեղեցու միաբան Գրիգոր քահանայ Շահնազարեանի ձեռքից. այդ բաւական չէ, անցեալ օր, ամսիս 1-ին, մտնում է իմ կացարանը վերոյիշեալ քահանան, տեսնում է, որ ես հիւանդ անկողնում պառկած եմ, հարցնում է ինձ՝ «ո՞ւր են իմ կրկնակօշիկներս, չէ՞ որ ես երկու օր առաջ քեզ յանձնեցի, որ մեր տուն տանես, ինչո՞ւ չես տարել». այդ ասելով սկսեց հարուածել ինձ ու խեղդել. այդ միջոցին վրա է հասնում կինս, որ ինձ ազատէ քահանայի ձեռքից. թողնում է ինձ ու սկսում է հարուածել կնոջս, որ այս րոպէիս հիւանդ է, ես ջոկ, նա ջոկ: Խնդրում եմ լրագրութեան միջոցով հարցնել յիշեալ քահանային թէ ինչ է իմ յանցանքը:

Կուկիայի Նորաշէն սուրբ Աստուածածին եկեղեցու ժամկոչ՝ Ս. Գասպարեան

ԿՈՉ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՆ ՍԱՆԵՐԻՆ

—

Ներսիսեան դպրոցի աղքատ աշակերտներին օգնելու համար այս տարի կազմվել է Թիֆլիսում մի ընկերութիւն: Հաւատացած ենք, որ այդ ընկերութիւնը հասարակութեան գիտակից մասի ջերմ համակրութեան առարկայ կը դառնայ: Ո՞ւմ յայտնի չէ, թէ տարիների ընթացքում ինչ են կրում Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտները սննդի, զգեստի, առողջ բնակարանի պակասութեան երեսից: Եւ քանի՜-քանիսը զոհ են գնում մեծ քաղաքի կեանքի դաժան պայմաններին: Այս բոլորը շատ աւելի լաւ գիտեն անշուշտ մանաւանդ Ներսիսեան դպրոցի նախկին սաները:

Ուստի սրանով դիմում ենք անխտիր բոլոր նրանց, որոնց համար թանգ են մեր կրթվող մատաղ սերնդի շահերը, և մանաւանդ Ներսիսեան դպրոցի ընթացաւարտներին, հրաւիրելով նրանց անդամ գրվել այս համակրելի ընկերութեան: Թող գիտենան ամենքը, որ իրանց երեքական րուբլի անդամավճարով կամ միանուագ նուէրներով կօժանդակեն Ներսիսեան դպրոցի սերունդների բարեկեցութեանը և լուսաւորութեան գործին ընդհանրապէս:

Վարչութիւն

Վարչութեան հասցէն՝ Правленіе общества вспомоществованія нуждающимся учащимся Тифлисской Армянской Нерсисянъ Духовной семинаріи.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ներկայ դրութեան մասին.— Անիշխանութիւնը Պարսկաստանում հասել է իր գագաթնակէտին: Բոլոր շահագրգռված պետութիւնները մէկը միւսի ետևից մտցնում են պարսից սահմանները զինուորական ոյժեր՝ իրանց հպատակների կեանքը և գոյքը ապահովեցնելու նպատակով: Հիւսիսային Պարսկաստանի խորքերում արդէն վաղուց կանգնած են թիւրքական ասկերները: Ռուսը կօզակներ է ուղարկում Ռաշտ, իսկ Էնզելի արդէն հասել է ռուս զինուորական նաւը: Անգլիան նոյնպէս իջեցրել է Բուշիրում նաւաստիների մի խումբ: Եւ զուր կը լինէր նման կարգադրութիւնների համար մեղադրել պետութիւններին: Հազիւ թէ մէկը որոշէ թէ որտեղ է Իրանում վերջանում անարխիստը կամ սահմանադրականը և որտեղ սկսվում աւազակը: Եւ այս տեսակ անարխիայում հազիւ թէ հաստատ մնայ այն սկզբունքը, թէ անթոյլատրելի է խառնվել մի անկախ պետութեան ներքին գործերի մէջ: Այսպիսի նախազգուշացման միջոցներ լաւ են, քան չէզոք դերը, որից յետոյ կը հարկաւորվի պատժական խմբեր ուղարկել՝ յանցաւորներին պատժելու նպատակով: Բայց քանի որ շահագրգռված պետութիւնները կանգնել են այդ ուղիի վրա, պիտի լինել հետևողական: Երբ նորերս անգլիական պարլամենտում հարցապնդում էին անում լորդ Գրէյից, թէ ինչու Անգլիան ոչինչ չէ ձեռնարկում վերջ դնելու պարսից անիշխանութեանը, որ վնասում է անգլիական առևտրական շահերին, Գրէյը պատասխանեց. «Մենք անում ենք, ինչ կարելի է: Մենք դրականապէս խորհուրդ ենք տալիս շահին տալ սահմանադրութիւն իր ժողովրդին: Բայց ստիպել նրան այդ անելու՝ մենք չենք կարող. Պարսկաստանը անկախ երկիր է»: Այժմ, երբ ռուս և անգլիացի զինուորները ոտ են դրել պարսից հողի վրա, էլ ինչու պաշտպանել այդ ֆիկցիան (չեղած բանը): Ի հարկէ ամենից լաւը այն կը լինէր, որ սկզբից պետութիւնները չը խառնվէին Իրանի ներքին գործերին: Այն ժամանակ իրերը այլ կերպ կը լինէին և գուցէ հարկ չը լինէր այժմ զինուորական ոյժեր մտցնելու: Շահը չէր համարձակվի ցրել մէջլիսը, եթէ թողնված լինէր իր ճակատագրին: Չէ որ նա բառիս իսկական նշանակութեամբ շուտով ուտելու բան չէր գտնի, քանի որ գանձարանը դատարկ է, իսկ Թէհրանի շուկան վաղուց է, ինչ նիսիա ոչինչ չէ բաց թողնում արքունիքին: Բայց շահը ունի ինչ-որ խորհրդաւոր բարեկամներ և Մահմեդ Ալիի գրպանում երբեմնապէս ոսկի է երևում և դրա հետ բռնկվում է նրա գոռոզ վճռականութիւնը՝ պահպանել իր միահեծանութիւնը: Դա նման կը լինէր կօմեդիայի, եթէ մենք չը կարդայինք նրաժան հեռագիրներ. «Թաւրիզում օրից օր սաստկանում է սովը, մարդիկ ընկնում են սովամահից»: Եւ երբ մտքով անցնում ես անցեալ յունիսից մինչև օրս կատարված անցքերը, երբ հաշւի ես առնում այն բոլոր չարիքը, որը շահը հասցրել է իր խեղճ, ուժասպառ, ճնշված պարսիկ ժողովրդին, այն ժամանակ պարսկական կօմեդիան դադարում է զաւեշտական լինելուց...(«Рус. Вѣд.»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

8 ապրիլի

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ: Կիսլովոդսկում ապրիլի 5-ին, ցերեկվայ ժամը 12 և 52 րոպէին, զգացվել են ստորերկրեայ հարուածներ, որոնց հետևել է որոտ: Հարուածները թոյլ տեսակի էին և զգացվեցին նաև տեղում:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: «Պանտելէյմոն» զրահանաւի նաւաստի Զագօրօդնին յեղափոխական կուսակցութեանը պատկանելու համար զինուորա-ծովային դատարանից դատապարտվեց ութ տարով տաժանակիր աշխատանքների:

ԲԵՐԼԻՆ: «Դոյչէ-Կաբէլ-Գրամմգէզէլշաֆտին» Շանխայից հեռագրում են. «Անտուն-Մուկդէն երկաթուղագծի վրա հեղեղը քանդել է ճանապարհը տասն կիլօմետր տարածութեան վրա: Սիխուչէնի ու Բենսիխուի միջև քանդվել են տասնվեց կամուրջներ»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Խօլերայով ոչ ոք չը հիւանդացաւ:

Նահանգական դատարանը քննեց առաջին Դումայի նախկին անդամ Կարնիլևի, ժանդարմական նախկին ունտէր-օֆիցէր Բօգդանօվի և գիւղացիներ՝ Ֆեօդօրօվի, Սվիստունօվի, Պուզօվի, Գօլուբևի և միւսների գործը, որոնք մեղադրվում են սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեանը պատկանելում և պայթուցիկ նիւթերի միջոցով կայսերական թատրոնների գրասենեակի գանձարկղը կողոպտելու փորձ անելու մէջ: Դատարանը Ժվիրբլիսին և Բօգդանօվին դատապարտեց 12 տարով տաժանակիր աշխատանքների, Գօլուբևին 10 տարով, Սվիստունօվին և Պուզօվին 8 տարով, Ֆեօդօրօվին 6 տարով, Կօրնիլօվին և Բօրձէին արդարացրեց:

ՄՕՍԿՎԱ: Գերմանիայից, Ֆրանսիայից և Դանիայից շատ գիտական և գրական մարդիկ տեղեկացրել են, որ գալու են Գօգօլի արձանի բացմանը մասնակցելու համար:

ՍՕՍՆՕՎԻՑԻ: Այրվեց Լեանտէրի և Կօէյբերգի ալիւրաղաց շոգեջրաղացը: Վնասը հասնում է մի միլիոն րուբլու:

ՊՕԼՏԱՎԱ: Ստորօժևօ գիւղում գտնվեց կեղծ դրամներ պատրաստելու արհեստանոց:

ՄԱԼՏԱ: Եկան Մարիա Ֆեօդօրօվնան և անգլիական թագաւորական զոյգը:

ՀՌՕՄ: Ֆինանսների մինիստրութիւնը և իտալական բանկի գլխաւոր վերատեսուչը համաձայնութիւն կայացրին բաց թողնել 3½ %-ային երկաթուղային օբլիգացիաներ 150 միլիոն լիր գումարի: 35 միլիոնը ստորագրեցին իտալական բանկերը:

ԲԵՐԼԻՆ: Մօլտկէի գործի առիթով Գարդէնի դէմ դատարանը վերջնիս ենթարկեց 600 մ. կ. տուգանքի բամբասանքի համար:

ՀԱԱԳԱ: Հրատարակվեց երէկ երեկոյեան ստորագրված Հօլլանդիայի և Վենեցուէլի միջև վիճելի հարցերի լուծման արձանագրութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԼՈՒՄԱՅ“

ամսագրի № 3—մարտի համարը և ուղարկվեց բոլոր բաժանորդներին:

Շարունակվում է բաժանորդագրութիւնը՝

Ռուսաստան—6 ր.: Արտասահման 8 ր.:

Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала «ЛУМА», Полиц № 7.

Խմբ.-Հրատ. Գիւտ ա.-ք. Աղանեանց

300. 1—1

Վրաստանի և Իմերէթի թեմի Հայոց Վիճակային Կոնսիստորիայի ատեանում ապրիլի 13-ին նշանակված է

ԱՃՈՒՐԴ

ջրաղաց կրկնաճուրդի, կապալով տալու վանքապատկան կղզին, որ գտնվում է Վանքի [illegible] եկեղեցու դիմաց: Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն որոշված գրաւականը:

(ու. կ) 297. 2—1

«ՄՇԱԿԻ»

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փոխարէն 10 րուբլի 70 կոպէկի

միայն 6 րուբլի 70 կ.

Կամենալով «Մշակի» բաժանորդներին և ընթերցողներին հնարաւորութիւն տալ էժան կերպով ձեռք բերել 1) «Մեսրոբեան Հանրամատչելի Գրադարանի» հրատարակութիւնները և մեր աշխատութիւնները, 2) Գ. Արծրունու երկերի առաջին հատորը, 3) Վրձինի «Մանրանկարները», մենք որոշեցինք հետևեալ գրքերը տարածել էժանագին գներով:

1. Գրիգոր Արծրունու Երկերը, հատոր առաջին, գինն է	1 ր. —
2. «Մանրանկարներ» Վրձինի, գինն է	1 ր. 50 կ.
Հ. Առաքելեանի ինքնուրոյն և թարգմանական աշխատութիւնները և «Մեսրոբեան Հանրամատչելի Գրադարանի» հրատարակութիւնները.	
3. «Անդերսէնի Հեքիաթները», թարգմ. Տ. Զաւէնի, գինն է	— 50 կ.
4. «Արբեցողութեան դէմ», բրօշիւր, գինն է	— 15 կ.
5. «Հայկական Տպագրութիւն», Լէօի, գինն է	1 ր. 20 կ.
6. «Ջնուդ-Քուչան», Շահրիարի, մեծ վէպ Պարսկաստանի կեանքից, գինն է	1 ր. —
7. «Ուրանիա», աստղագիտական մեծ վէպ Ֆլամմարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի, գինն է	1 ր. 50 կ.
8. «Քսան Վէպիկներ», Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի, գինն է	1 ր. —
9. «Անգլիայի հասար. և քաղաքական կեանքը», գինն է	— 15 կ.
10. «Հասարակութեան նեցուկները», դրամա Հ. Իբսէնի (պատկերով), թարգմ. Լ. Բաբայեանի, գինն է	— 15 կ.
11. «Դէպի Արարատ», Արշ. Մխիթարեանի, գինն է	— 40 կ.
12. «Մի ամիս Արևելքում», Հ. Առաքելեանի, գինն է	— 40 կ.
13. «Նոր Կեանքի Շեմքում», դրամատ. էտիւդ Ա. Ք.	— 40 կ.
14. «Միլտոնի կեանքը», կազմեց Հ. Առաքելեան	— 25 կ.
15. «Գալիլէյի կեանքը», կազմեց Հ. Ա.	— 25 կ.
16. «Ձեռնարկ Տրամաբան., Հոգեբ., Բանահիւսութեան», կազմեց Հ. Առաքելեան, գինն է	— 50 կ.

Բոլոր այս 16 գրքերն, որոնց արժէքն է 10 ր. 70 կ., կարելի է ստանալ, ուղարկելով միայն 6 ր. 70 կ., որի մէջ և ճանապարհածախսը, իսկ առանց ճանապարհածախսի, Թիֆլիսում կարելի է ստանալ 5 ր. 50 կ.-ով:

Դրամ և պատուէր պէտք է ուղարկել այս հասցէով Тифлисъ, редакція газеты «Мшакъ», Амбарцуму Аракеляну.

(օ. մ.) 268. 10—3



!Կենդանի պանօրամա!

կարող է ունենալ իւրաքանչիւրը՝ ձեռք բերելով ամերիկ. ծալվող խոշորացոյց, ամբողջապ. նիկելաջրած, կօթով և 30 հատ լուսանկ. երկմաս պատկերով, 4—2 վերշ. մեծ., Պարիզի յայտնի Ն. Պ. Գ. ատելիէի. բնական կերպով ցոյց է տալիս ռուս. և արտասահմ. տեսար., քաղաքներ, պարիզեան ժանր և այլն: Խոշորացոյցի գինը՝ 30 տեսարաններով՝ միայն 2 ր. 25 կ.: Ճանապարհածախք 40 կ. (Սիբիր՝ 75 կ.): Ուղարկվում է վերադիր վճ. և առանց կանխավճ.: Կան զանազան պատկերներ մօտ 10,000: 5 հատը 36 կ.: Հասցէագրել՝ С. Д. Перельманъ, Варшава, Панская 39/33.

Նորութիւն! Մեսսինայի և Կալաբրիայի երկրաշարժի պատկերները՝ 9 հատ—90 կոպ.: Փոքր ձևի խոշորաց., 150 պատկերներով—1 ր. 75 կ.:

(10,20,31,ապ.10) (В. 15736) 192. 4—4

ԾԱԽՎՈՒՄ Է

Պատահմամբ պղնձէ վաննա, ցիլինդր իր բոլոր պատկանելիքներով, նոյնպէս և ձեռագործի մեքենայ:

Հասցէ՝ Московская ул., № 13. кв. № 1.

Գալ 12-ից մինչև 2 ժամը ցերեկվայ:

286. 3—1

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“

Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ

«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով.

Այս միջոցը մի քանի օրում կ
բոլորովին ոչնչացնում

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:

(10, 20, 30) 50—43

Բացված է բաժանորդագրութիւն

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

քաղաքական, հասարակական, տնտեսական, գրական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

որ լոյս կը տեսնէ Կ. Պոլսում,

Տիգրան Զաւէնի խմբագրութեամբ:

Բաժնեգինն է Ռուսաստան՝ տարեկան 5 ր. վեցամսեայ 3 ր.

Հասցէ՝ Rédaction de la revue «Erkri Dzain», Findjandjilar, Chark Han № 42, Constantinople

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.